Azg
ԱԶԳ
21 ԱՊՐԻԼ 2005 ՀԻՆԳՇԱԲԹԻ 71 (3237)

«Էկոնոմիստ». «Իլհամ Ալիեւը բավարար չափով ուժեղ չէ իր ժողովրդին փոխզիջում հրամցնելու համար»

«Մոտ ապագայում ղարաբաղյան հակամարտությունը չի կարգավորվի», կանխատեսել են «Էկոնոմիստ» բրիտանական հանդեսի հետազոտական խմբի փորձագետները: Միաժամանակ նրանք հիշ հավանական են համարում պատերազմի վերսկսումը:

«Հայաստանը եւ Ադրբեջանը չեն ցանկանում համաձայնել փոխզիջումների, որն առաջարկում են միջազգային միջնորդները: Իսկ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը բավարար չափով ուժեղ չէ իր ժողովրդին նման փոխզիջում հրամցնելու համար», «Էկոնոմիստից» մեջբերում է «Ազատություն» ռադիոկայանը:

«Հրադադարի համախակի խախտումները դժվար թե վերածեն լայնածավալ ռազմական գործողությունների, քանզի Ադրբեջանը հազիվ թե դիմի նման ռիսկի՝ առաջնորդելով իր վաս զինված բանակը Հայաստանի դեմ: Լեռնային Ղարաբաղի հայկական ուժերը լավ զինված են ի տարբերություն Ադրբեջանի բանակի, որը թույլ է, եւ որի նկատմամբ կառավարությունը թերահավատ է, քանզի զինված ուժերը խաղաղական միջամտության փորձ ունեն», կարծում են «Էկոնոմիստի» փորձագետները:

Տասը տարի անց. Հայաստանի առաջին եւ գործող նախագահները Մեծ եղեռնի մասին

Լեւոն Տեր-Պետրոսյան. «Հայոց ցեղասպանությունը զուտ քաղաքական ծրագիր էր՝ թելադրված Օսմանյան կայսրության կոնկրետ պետական շահերից»

Ռոբերտ Քոչարյան. «Մենք դարձանք Առաջին աշխարհամարտի զոհը, թեեւ մենք չէինք այն սանձազերծել»

ԹԱԹՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

«Ճանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավերներ. մարդու իրավունքները եւ ցեղասպանությունը» երկօրյա միջազգային համաժողովը երեկ բացվեց հանրապետության ղեկավարի ելույթով: Նախագահի պաշտոնավարության 8 տարիներին Ռոբերտ Քոչարյանն ունեցավ թերեւս ամենածանրակշիռ, պետական գործչին վայել ելույթ: «Մենք դարձանք Առաջին աշխարհամարտի զոհը, թեեւ մենք չէինք այն սանձազերծել», ասաց նախագահը:

Քոչարյանը «չափազանց կարեւոր» համարեց «նախկինում տեղի ունեցած ցեղասպանությունների դատապարտումը»: «Պետությունները ավելի համարձակ են ընդդիմանում աշխարհի որեւէ ծայրամասում ցեղասպանություն իրագործելու փորձերին: Սակայն այս ամենը չփրկեց մարդկությանը ցեղասպանություններից: Հարավսլավիա, Ռուանդա, Արեւելյան Թիմոր, Սուդայիթ՝ բոլոր այս տեղերում կրկին հոսեց անմեղ մարդկանց արյունը»:

«Հայ ժողովուրդը ցեղասպանության պատճառով դարձավ գաղթական եւ սփռվեց ողջ աշխարհով: Մեծ քաղաքականությանը զոհաբերվեց Հայոց եղեռնը միջազգայնորեն դատապարտելու եւ պատմական արդարությունը վերականգնելու անհրաժեշտությունը: Ցեղասպանություն ծրագրած եւ իրագործած հանցագործները հիմնականում մնացին անպատիժ, ավելին՝ Թուրքիային վերադարձվեց Բեռլինում սպանված Թալեաթ փաշայի աճյունը, եւ այն պատվով թաղվեց Ստամբուլում: Դա անպատժելիության էսկալացիայի փոխանցման տխուր վկայությունն էր: Նման ոճրագործությունների մոռացության համար մարդկությունը չափազանց մեծ գին է վճարում», ասաց Քոչարյանը:

Տես էջ 3

ՏԳՍՅԻԳ

Պաշտոնական Բաքուն խնդադատում է միջնորդներին

Պաշտոնական Բաքուն հանդես է եկել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին հայտարարության խնդադատությամբ: Միջնորդները կոչ էին արել ղարաբաղյան հակամարտության կողմերին ամրապնդել զինադադարը, հրաժարվել պատերազմի քարոզչությունից եւ ժողովուրդներին նախապատրաստել փոխզիջումների:

Ըստ «Մեդիամաքսի», Ադրբեջանի նախագահի աշխատակազմի միջազգային կապերի բաժնի ղեկավար Նովրուզ Մամեդովը հայտարարել է, որ «նման հայտարարությունները հակասում են միջնորդների առաքելությանը եւ լիազորություններին»:

«Մենք չենք գործում ըստ համանախագահների ասածների: Նրանք ընդամենը միջնորդներ են եւ պետք է կատարեն իրենց աշխատանքը: Նրանց հայտարարություններն ուղղված երկու ժողովուրդներին, մեզ պետք չեն», նշել է Մամեդովը: Նրա խոսքերով, «համանախագահները պետք է նման կոչով դիմեին Հայաստանի ղեկավարությանը եւ ժողովրդին»:

Նովրուզ Մամեդովն ասել է, որ «Բաքվի համար սկզբունքային զիջումների մասին խոսք անգամ լինել չի կարող»: «Մեր դիրքորոշումը հաստատուն է. Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը պետք է ապահովվի, գրավված տարածքները՝ ազատագրվեն, փախստականները՝ վերադառնան իրենց հարազատ օջախները: Եթե դրա շրջանակներում լինի որեւէ զիջում, ադրբեջանական կողմը կքննարկի եւ որոշում կկայացնի», նշել է Մամեդովը:

Հունգարիայի խորհրդարանը քննարկում է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 11 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը քննարկվում է Հունգարիայի խորհրդարանի Մարդու իրավունքների հանձնաժողովում: Այդ մասին լրագրողներին է հաղորդել «Եվրոպայի համահայկական համաժողովի» նախագահ Ալեխ Ավանեսյանը: Ըստ նրա, հաջորդ պաշտոնական քայլը կլինի համապատասխան օրենսդրության մշակումը հունգարացի խորհրդարանականների կողմից: Որպես Հունգարիայի օրենսդիր մարմնի հայոց ցեղասպանության վերաբերյալ ուշացած արձագանքի պատճառ նախագահը նշում է Հունգարիայի հասարակական եւ քաղաքական ուժերի ոչ բավարար իրազեկությունը այս հարցի շուրջ: «Դա բացատրվում է հայ համայնքի փոքրաթիվությամբ, ինչպես նաեւ դիվանագիտության աշխատանքում տեղ գտած բացթողմամբ:

Հուսով եմ, որ այդ բացթողումը շուտով կփոխհատուցվի Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրենքի ընդունմամբ Հունգարիայում», ընդգծել է Ա. Ավանեսյանը:

Նախագահ Քոչարյանը մեկնեց Փարիզ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ, օրվա երկրորդ կեսին աշխատանքային այցով մեկնել է Փարիզ, որտեղ հանդիպումներ կունենա նախագահ Ժակ Շիրակի, Սենատի եւ Ազգային Ժողովի նախագահների հետ:

Նախագահը Երեւան կվերադառնա ապրիլի 23-ին:

***

Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ապրիլի 19-ի հրամանագրով Արման Կիրակոսյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ:

ՀԱՄԱՌՈՏ

Բեռլուսկոնին հրաժարվում եւ կազմում է նոր կառավարություն

Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին երեկ հայտարարեց, որ հրաժարական է ներկայացնելու հանրապետության նախագահին եւ անմիջապես հետո կազմելու է նոր կառավարություն: Այդ քայլով նա հույս ունի վերջ տալ կառավարական ճգնաժամին, որ առաջացել էր նրա կաբինետի 4 անդամների հրաժարումից: Միաժամանակ Բեռլուսկոնին կարծում է, որ այդ քայլն իրեն եւ իր գլխավորած «Առաջ, Իտալիա» շարժմանը հնարավորություն կտա խուսափելու վաղահաս ընտրություններից: Այսուհանդերձ, դիտորդները կասկածում են, որ Իտալիայի խորհրդարանը կուլ կտա վարչապետի այդ քայլը՝ նկատի ունենալով ժողովրդային մեծ ճնշումը, որ պատգամավորներից պահանջում է Իրաքից հետ կանչել իտալական բանակի միավորումները: Հիշեցնենք, որ ներկա Իտալիան իրաքյան կոալիցիայի կազմում ունի 3169 զինծառայող:

Դիակներ Տիգրիս գետում

Ամենօրյա ռմբահարումներից բացի, որոնք երեկ կրկնվեցին Իրաքի տարբեր քաղաքներում, Ջալալ Թալաբանիի իշխանությունն այժմ ահաբեկչական նոր ճնշումների թիրախ է դարձել: Երեկ Բաղդադում, Տիգրիս գետում հայտնաբերվել է ավելի քան 50 մարդու դիակ, իսկ երկրի հյուսիսում գտնվող Հադիթա քաղաքի սադիոնում՝ 20 հոգու մարմին: Թալաբանիի հայտարարության համաձայն, բոլոր սպանվածները էլ իրաքյան անվտանգության ուժերի ու բանակի զինվորներ են: Ըստ Թալաբանիի, իրենց հայտնի են ոչ միայն սպանվածների, այլեւ ահաբեկիչների անունները:

Փոխանակման կետերը՝ ֆինանսական շուկայի ամիլլեսյան գարշապար

Տարօրինակություններն ու ապօրինությունները այստեղ չեն դադարում

ԱԲՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Դրամի արժեւորումը շարունակում է լուրջ տարակարծությունների տեղիք տալ: Եթե նախկինում դրամի արժեւորման հիմնական պատճառը համարվում էին միջազգային շուկայում տեղի ունեցող տատանումները, ապա այժմ միջազգային շուկայում տեղի ունեցող դոլարի ամրապնդմանը մեր շուկան ոչ միայն համարժեք չի արձագանքում, այլեւ հակառակ վարքագիծն է դրսեւորում: ԿԲ խորհրդի անդամ Վաչե Գաբրիելյանը մեր թերթին տված հարցազրույցում դրա պատճառը համարեց այն հանգամանքը, որ միջազգային շուկայի գործընթացները Հայաստանի վրա ազդում են միջնորդավորված, եւ որ մեր տնտեսվարողներն ուղղակի գործարքներ չեն իրականացնում եվրոպական բորսաներում: Դրամի արժեւորման մեկ այլ կարեւոր պատճառաբանություն նշվեց առաջին եռամսյակում բնակչության կողմից շուրջ 40 մլն դոլարի վաճառքը բանկերին եւ փոխանակման կետերին: Ընդ որում, նա հայտնեց, որ դրա մի մասը ձեռք է բերել ԿԲ-ն, ինչը տեղի չունենալու դեպքում փոխարժեքի տատանումն ավելի մեծ կլիներ:

Այդտեղ նշվեց, ԿԲ խորհրդի անդամի՝ ֆինանսական շուկայում կարեւոր դեր ունեցող փոխանակման կետերի գործունեության վերաբերյալ տված պարզաբանումները չցրեցին այն տպավորությունը, որոնք ձեւավորվում են շարքային քաղաքացիների մեջ այդ օբյեկտների գործունեությունից:

Տես էջ 2

Եվրոպան գրավիչ տուկա է հայ գործարարների համար

Եվրամիությունը ենթարկում է Հայաստանին առավել բարենպաստության ռեժիմներ տրամադրելու հարցը

Հայաստան-Եվրամիություն համագործակցության առեւտրի, տնտեսական եւ իրավական հարցերով ենթակոմիտեի հինգերորդ նիստի ժամանակ քննարկվել են Հայաստան-ԵՄ համագործակցության, Հայաստանի արտահանման ընդլայնմանը, ներդրումների խթանմանը, հարկային եւ մաքսային վարչարարության բարելավմանն առնչվող հարցերը: Այդ մասին երեկ նիստի ավարտից հետո լրագրողներին տեղեկացրին ենթակոմիտեի համանախագահները՝ առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Տիգրան Դավթյանը եւ Եվրոպական հանձնաժողովի արտաքին հարաբերությունների վարչության պետ Կոնտ Յուլը:

Նկատի ունենալով, որ Եվրամիությունը Հայաստանի թիվ 1 գործընկերն է եւ առաջիկայում կմնա այդպիսին, կողմերը քննարկել են այդ ուղղությամբ խոչընդոտների վերացման եւ առավել ազատական ռեժիմներ տրամադրելու հարցը: Տիգրան Դավթյանն ընդգծեց, որ նման ռեժիմի տրամադրումը կնպաստի Հայաստանից Եվրոպա արտադրանքների արտահանմանը: Հաջորդ քննարկված հարցն առնչվում էր Հայաստանին տուկայական երկրի կարգավիճակ տրամադրելուն, որը հնարավորություն կտա դեմպինգային ռեժիմներ կիրառել մեր ապրանքների համար:

Կոնտ Յուլն իր հերթին հայտնեց, որ Եվրոպական «Նոր հարեւաններ» ծրագիրը հնարավորություն է տալիս տարածաշրջանի երկրներին, այդ թվում՝ Հայաստանին օգտվել տնտեսական այն հնարավորություններից, որոնք առկա են Եվրամիությունում: Նա նշեց, որ տնտեսական բարեփոխումների առումով Հայաստանն առաջընթաց է արձանագրել, իսկ ենթակոմիտեի աշխատանքի գլխավոր նպատակը Հայաստանի հետ ԵՄ առեւտրային հարաբերությունների եւ Հայաստանի ներդրումային հնարավորությունների բարելավումն է: Եվրոպացի պատգամավորը, պատասխանելով հարցերից մեկին, նշեց, որ Հայաստանը տնտեսական նկատելի աճ է ունեցել, բայց անհրաժեշտ համարեց դրա արդյունքների տեսանելի լինելը բնակչության համար: Նա նաեւ տեղեկացրեց, որ իր ներկայացրած կառույցը հետետում է աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի կատարմանը:

Ատոմակայանի փակման վերաբերյալ հարցին Կոնտ Յուլը պատասխանեց, որ փակման կոնկրետ օր նշել հնարավոր չէ, որովհետեւ Հայաստանն էներգետիկ ոլորտում խնդիրներ ունի: Նա նշեց, որ այս հարցի քննարկումները շարունակվում են:

Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման հարցը թեեւ չէր քննարկվել նիստի ժամանակ, բայց փոխնախարարը ասաց, որ Եվրոպական կողմն ընդունում է այդ խնդիրը եւ գիտի, որ դա ազդում է մեր արտահանման եւ ներմուծման վրա: Ինչ վերաբերում է փոխարժեքի տատանումների ազդեցությանը Եվրոպական արտահանման ոլորտում ունեցող հայկական ձեռնարկությունների վրա, ապա, ըստ Տիգրան Դավթյանի, մեր գործարարները հասկացել են, որ Եվրոպա արտահանումն ավելի ձեռնտու է, քան դեպի այլ երկրներ: Նրանք նաեւ կողմնորոշվել եւ հասկացել են, որ Եվրոպան եւ Եվրոյի գոտին շատ գրավիչ տուկա է:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հանրահավաքի ժամանակ կրակել են «ՆԺ» կուսակցության ակտիվիստի վրա

Գորիսից ու Մարտունուց սադրիչներ են ուղարկվել հանրահավաքի

Ընդդիմադիր գործիչների հանրահավաքներով ոտեկցվող մարզային այցելություններին իշխանությունները ակնհայտորեն անբարյացակամ են վերաբերվում:

«Նոր ժամանակներ կուսակցությունը» երեկ միտինգային այց էր կազմակերպել դեպի Սեւան: Կուսակցության նախագահ՝ Նոր Հաճը եւ Թալին այցելությունների ընթացքում կիրառվեցին ճանապարհներ փակելու, ծեծկռտուքի ավանդական հնարքները:

Սակայն երեկ Սեւանում կատարվածն անցել է սահմանները: Կրակել եւ վիրավորել են կուսակցության երիտասարդական թեւի ակտիվիստ Գարիկին (ազգանունը չհայտնեցին հարազատներին կանխավ հուզումներ չպատճառելու համար): Միջադեպի առիթով կուսակցության առաջնորդ, ազգային հեղափոխության ջատագով Արամ Կարապետյանը «Ազգի» հետ զրույցում ասաց. «Մի խումբ սադրիչներ, իմիջիայլոց, ոչ Սեւանից, ուղարկվել էին հատուկ այդ նպատակով: Երբ որ ժողովուրդն սկսեց հարցեր տալ ինձ, ներքեւում սկսեցին հայհոյել: Ժողովուրդը, ի դեպ, բավականաչափ անխնա ինքը սկսեց ծեծել նրանց: Մոտ 300 հոգով 20 հոգու ծեծում էին: Այդ բաժանող տղաներից մեկի վրա կրակեցին, եւ ոտքը վիրավորվեց: Տարել ենք հիվանդանոց»:

Թե կոնկրետ իշխանության որ օղակում, որ գործչի հրահանգով են խանգարվում հանրահավաքները, Արամ Կարապետյանը չգիտի: Հանրահավաքի օրը կուսակցության մի քանի ներկայացուցիչներով գնացել են ՆԳ ծառայություն, հավանական սադրանքի մասին իրենց տեղեկությունը հաղորդելու, բայց պատասխանատուներից ոչ ոքի չի հաջողվել հանդիպել:

Այս ամբողջ պատմության մեջ ուշագրավ մի մանրամասն կա. փաստորեն, հանրապետությունով մեկ մասնագիտացվում են հանրահավաքները սադրող խմբեր, որ անհրաժեշտ պահին դեպքի վայր են առաքվում:

Ի դեպ, միտինգն արտոնված է եղել:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կոալիցիոն փոսեր մայրաքաղաքի կենտրոնում

«Լինսի» հիմնադրամը շրջանցեց մայրաքաղաքի կենտրոնում գտնվող Հանրապետության (նախկին Ալավերդյան) փողոցի վերանորոգումը, որն արդեն մի քանի տարի անմխիթար վիճակում է: Հենց փողոցի սկզբնամասից սկսվում են ասֆալտի տարբեր չափերի փոսերը, որոնք անձրեւային օրերին լցվում են ջրով, իսկ վարորդներն էլ, բնականաբար, ջրափոսերի խորությունը չնկատելով կոտրում կամ վնասում են ավտոմեքենան, անտպասելի տեղերը շրջանցելով վթարային իրավիճակ ստեղծում: Իսկ թե որքան անցորդ է զայրանում իր վրա թռած կեղտաջրից ու մտքում հայհոյում, կարելի չէ ասել...

Այդ փողոցում եւ հարեւանությամբ են գտնվում Հանրապետական եւ ՀՅԴ կուսակցությունների կենտրոնական գրասենյակները, որոնց շրջապատի մի մասը շտկված ու ասֆալտապատված է, սակայն այսպես կոչված «կոալիցիոն փոսերը» մնում են հենց նրանց կուսակիցների քթի առաջ... Ինչպես հայտնի է, կոալիցիայի ներսում էլ նման խոր փոսեր են առաջացել ու, թվում է, անիմաստ է տպատել, թե ե՞րբ եւ ո՞վ կլցնի դրանք...

Իսկ թե ինչ կարծիք կկազմեն մեր մասին հյուրերը, որոնց մի մասը, հատկապես Ֆրանսիայից, նույն փողոցի վրա գտնվող «Եվրոպա» հյուրանոցում են իջեւանում: Նրանք սիրտպված են ամեն օր այդ քարուքանդ փողոցով վեր ու վար «ճեմել» եւ միայն տիաճ պատկերներ տեսնել, որը հավերժացնում են տեսախցիկով, լուսանկարչական ապարատով... Հյուրանոցի տնօրենությունը մի քանի անգամ խիզոով ծածկել է փոսերը, սակայն հարցը դրանով չի լուծվել: Անձրեւները կրկին քանդել ու տարել են խիզը: Մի՞թե մեր ղեկավար այրերը Ֆրանսիայում նման փոսեր են շրջանցում: Կոալիցիայի կուսակցություններն ազդեցություն չունե՞ն թաղապետարանի վրա, թե՞ սպասում են հերթական կամ արտահերթ ընտրությունների, որ այս փողոցն էլ ասֆալտապատեն: Այստեղ արժե հիշել մի ասացվածք. «Մինչեւ առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա»: Այս պարագայում ջուրը եկել է «վերեւից», իսկ «գորտերը» կուրացել են ու փոսերը թռչկոտելով են անցնում:

Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հնարավոր է իշխանափոխության ելցինյան տարբերակ

«Անցնցում, թավշյա ինչպիսի՞ տեխնոլոգիաներ են հավանական, որ կարող է կիրառել իշխանությունը խոսակցությունների մշտական թեմա դարձած իշխանափոխության ժամանակ». «Ազգի» այս հարցադրմանը ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը պատասխանեց. «Եթե ներսից է փոփոխությունը կատարվելու, դա կարող է լինել ելցինյան տարբերակի մեխանիզմով: Այնպես, ինչպես Գորբաչովը բերեց իր վարչապետին, իշխանությունում նորմալ վիճակ ստեղծեց, հետո, երբ ինքը դուրս եկավ, իշխանությունը տվեց նրան:

Դա կարող է լինել նաեւ 1998 թվականի հեղաշրջման տարբերով: Հաջորդը՝ հավանական կարող են լինել դարձյալ վերեւի նախաձեռնությամբ վաղաժամկետ խորհրդարանական կամ նախագահական ընտրությունները»:

Այնուամենայնիվ, կյանքը ցույց է տալիս, որ ամենատուր երեւակայությունն ու վերլուծական միտքն անզոր են կանխատեսելու իրադարձությունների սցենարը: Ամենահավանականը միշտ էլ անակնկալներն են: Բացառված չէ, որ թվարկված 3 տարբերակները կձգվեն մինչեւ հերթական ընտրությունները:

Ինչ վերաբերում է ներիշխանական քաղաքական ինստիտուտների կառավարման գրագիտության մակարդակին, ապա՝ «ուզուրպացված իշխանության օրոք եթե ձայն ես բարձրացնում, քեզ ջարդում են: Ուրեմն, ի՞նչ կառավարելիության մասին կարելի է խոսել: Անձից շատ բան է կախված, բայց կախված է նաեւ քաղաքական ինստիտուտներից՝ եւ վերեւում գտնվող իշխանության թեւերից, եւ սահմանադրության անկատարությունից: Նորմալ սահմանադրության դեպքում շատ բան, որ հիմա կատարվում է, դժվար թե լիներ»:

Կ. Դ.

Փոխանակման կետերը՝ ֆինանսական տուկայի աֆիլեյան գարշապար

1-ին էջից

Դեռ անցյալ տարվանից, երբ սկսվեցին փոխարժեքի տատանումները, հատկապես Տիգրան Մեծ եւ Կասյան փողոցների փոխանակման կետերը միաժամանակ սկսեցին սահմանել դրամ-դոլար փոխարժեքի միեւնույն ցուցանիշները, որոնք նախկինից տարբերվում էին նրանով, որ առք եւ վաճառքի տարբերությունը 2-4 դրամի փոխարեն տատանվում էր 8-12 դրամի սահմաններում: Առք եւ վաճառքի՝ ամիսներ առաջ նրանց որոշագրած այդ քաղաքականությունն անգամ ԿԲ սուղումներից եւ մի շարք փոխանակման կետերը փակելուց հետո մնաց անփոփոխ: Դարձյալ մեր թերթին տված հարցազրույցում մի շարք փոխանակման կետերի գործունեության կասեցումը ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանը բացատրեց դրանց կողմից սվերային տնտեսության սպասարկմամբ, ինչը, բնականաբար, օրենքով արգելված է: ԿԲ նախագահը նաեւ նշել էր, որ այդ գործունեության արդյունքում փոխանակման կետերում օրական մնացորդը սկսվում էր 10 հազար դոլարից, իսկ որոշ միջին թիվ նշեց 50-100 հազար դոլարը:

Հասկանալի է, որ այսպիսի սվերային գումարների առկայությամբ հիբրիդ սուբյեկտները ի վիճակի են գոնե կարճ ժամանակահատվածի համար (մեկից մինչեւ մի քանի օր) իրենց ցանկացած փոխարժեքը թելադրել եւ հսկայական ապօրինի շահույթներ ստանալ: Ասվածի ապացույց կարելի է համարել մեկ այլ երեւույթ, որը դրսեւորվեց անցյալ շաբաթ եւ կիրակի օրերին, երբ դրամ-դոլար փոխարժեքը հասավ մինչեւ 420 դրամի: Ընդ որում, դոլարի առքի վերոհիշյալ փոխարժեքը սահմանելով, վաճառքի ցուցանիշն այդ երկու օրերին փոխանակման կետերի մեծ մասն ընդհանրապես չէր նշում: Սակայն աշխատանքային օրվա սկսվելուն պես փոխարժեքն իսկույն վերադարձավ 430 դրամ 1 դոլարի դիմաց (առքը) ցուցանիշին, իսկ առքի եւ վաճառքի տարբերությունը կազմեց 12 դրամ: Ընդգծենք, որ առաջին անգամը չէ, երբ փոխանակման կետերում նման կտրուկ տատանումներ են արձանագրվում հանգստյան կամ տոնական օրերին: Բացահայտ է նաեւ, որ վերոնշյալ փողոցների փոխանակման կետերը դա իրականացնում են համաձայնեցված, ինչը ոչ այլ ինչ է, քան հակամրցակցային համաձայնություն:

Վերոնշյալին մնում է միայն ավելացնել արդեն սովորական դարձած արտասովոր երեւույթներն ու ապօրինությունները փոխանակման կետերում: Բացի արդեն հիշատակված առքի գինը նշելուց եւ վաճառքինը չնշելուց, մշտական խնդիր է 10 կամ 20 դոլար գնելու, 100 դոլարանոցի 10 կամ 20 դոլարը դրամով փոխանակելու հնարավորություն չունենալը: Կարելի է անցնել Տիգրան Մեծ կամ Կասյան փողոցները ծայրից ծայր, բայց բոլոր փոխանակման կետերում «մանր չկա» արտահայտությունը կլսես: Թեեւ 100 դոլարից 30-ը փոխանակելու դեպքում այդ «մանրը» անմիջապես հայտնվում է: Ամենատարօրինակն այն է, որ նման դեպքերում ոչ ոքի չես կարող բողոքել կամ որեւէ կերպ պատասխանատու իրավունքներդ:

Ակնհայտ է, որ փոխանակման կետերի գործունեության կարգավորման առումով մինչ այժմ ձեռնարկված քայլերը բավարար չեն, եւ Կենտրոնական բանկն ու հարկային ոլորտական ծառայությունն այստեղ բազմաթիվ անելիքներ ունեն:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Լրագրողների սենյակ / հեռ 581841

Հանակարգչ. ծառայություն / հեռ 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ 529353

Հանակարգչային շարուածը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER

Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹՍԱՑԻԿ

«Երբ Մ. Նահանգները փոխի իր դիրքորոշումը, մեկ rոպե անց կփոխի նաեւ Իսրայելը»

«Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր. ցեղասպանությունն ու մարդու իրավունքները» համաժողովում երեկ ելույթ ունեցան Իսրայելից ժամանած 4 ներկայացուցիչները՝ պրոֆեսոր Եհուդա Բաուերը, Հոլոքոստի եւ ցեղասպանության ինստիտուտի տնօրեն Իսրայել Չարնին, Իսրայելի Կնեսեթի անդամ, «Մերեց» կուսակցության առաջնորդ Յոսի Սարիդը, Իսրայելի «Բաց համալսարանի» պրոֆեսոր Յաիր Օռնը:

«Ազգի» հետ ճեպազրույցում պրոֆեսոր **Եհուդա Բաուերը** խոսեց Իսրայելի կառավարության եւ հասարակության հակադիր դիրքորոշումների մասին:

«Մոտ ապագայում Իսրայելը կփոխի՞ իր ժխտողական դիրքորոշումը» մեր հարցին նա պատասխանեց. «Երբ ամերիկացիները փոխեն իրենց դիրքորոշումը, մեկ rոպե անց կփոխի նաեւ Իսրայելը: Կառավարությունը վախենում է Թուրքիայի հետ հարաբերությունները փչացնելուց, բայց հասարակությունը հակառակ դիրքորոշում ունի եւ Հայոց ցեղասպանության մասին խոսում է բացահայտորեն: Սա է իրական պատկերը, եւ չեմ կարծում, որ այս կառավարությունը երբեւէ փոխի իր կեցվածքը: Այս հարցում հասարակության դիրքորոշումը էական դեր չի խաղում: Կասկածի նշույլ չունեմ, որ եթե իսրայելցիներին հարցնեն, նրանց գերակշիռ մասն իսկույն կճանաչի Հայոց ցեղասպանությունը»:

Մեր հաջորդ հարցին՝ Հայաստանի համար ո՞ր խյլն է այսօր առաջնային, նրա պատասխանը հետեւյալն էր. «Ամեն ինչ անել, որ Մ. Նահանգները ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Դա է ամենակարեւորը»:

«Ցեղասպանության ժխտումը որպես մարդու իրավունքների շարունակական ոտնահարում» թեմայով խոսեց Հոլոքոստի եւ ցեղասպանության ինստիտուտի տնօրեն **Իսրայել Չարնին**: «Մենք լուրջ առաջընթաց ենք արձանագրել Հայոց ցեղասպանության մերժման թուրքական հաղթականության դեմ պայքարում. ավելացել է ցեղասպանությունը ճանաչող թուրքերի եւ թուրք գրողների թիվը: Թուրքերը գիտեն, որ իրենք ճակատամարտը տանուլ են տալիս, պարզ է, որ նրանք միանգամից չեն հանձնվելու, բայց ժխտումը վնասում է հենց իրենց հասարակությանը, խոչընդոտում պետության զարգացմանը: Թուրքերի հետ աշխատելիս ամենահոգնեցուցիչն այն է, որ նրանք միշտ ճիշտ են, իսկ ամենավատը, որ իրենք երբեք չեն սխալվում»: Նա հավելեց, որ վերջին ամիսներին թուրքերը տարբեր անիմաստ նախաձեռնություններով են հանդես գալիս, օրինակ, նրանք պահանջում են մի անգամ եւս դատել Սողոմոն Թեհլերյանին՝ Թալեաթին սպանելու համար, ստեղծել ցեղասպանության հարցը վերանայող միջազգային հանձնաժողով:

«Ժամանակն է, որ մենք՝ տուժող եւ զոհ ժողովուրդներս, չսահմանափակվենք միայն մեր ցեղասպանությունները հիշելով, մենք պարտավոր ենք հարգել ցեղասպանության ենթարկված մյուս ժողովուրդների իրավունքները, միայն այդպես աշխարհում կվերականգնվեն սրբությունները եւ արժեքները», ավելացրեց նա:

Եհուդա Բաուեր

Յոսի Սարիդ

Իսրայելի Կնեսեթի անդամ, «Մերեց» կուսակցության առաջնորդ **Յոսի Սարիդը** խոսեց այլ ժողովուրդների զոհերի հանդեպ հրեա ժողովրդի պարտավորությունների մասին, նշելով Ռուանդայի ցեղասպանությանն իր ականատես լինելու, Հայոց ցեղասպանության 85-րդ տարելիցին Երեւանում հայ համայնքի կողքին առաջին անգամ լինելու, ինչպես նաեւ Դարֆուրում այսօր շարունակվող սպանդի մասին: «Մենք հրեաներս՝ ատելության զոհերս, կրկնակի ցեղասպանության ենթարկվածների նկատմամբ ուշադիր ու զգայուն լինելու պարտականություն ունենք: Մենք մեր երիտասարդների մեջ պետք է ընդլայնում առաջացնենք նոր ծրագիրը, եւ իր փափագն է՝ դասագրքերում մի ամբողջ գլուխ նվիրել Հայոց ցեղասպանությանը, որպեսզի այդ անմարդկային վայրագության մասին աշակերտների գիտելիքներն ավելի ամբողջական դառնան: «Որոշ հրեաներ վախենում են, թե հայ ժողովրդի տառապանքի ճանաչումը կնվազեցնի Հոլոքոստի կարեւորությունը: Դա, իհարկե, հրեավոր հանցագործություն էր հրեա ժողովրդի նկատմամբ, սակայն այստեղ ներկա Իսրայելի իմ գործընկերները հավատում են, որ դա ոճրագործություն էր նաեւ մարդկության դեմ: Միայն հրեաները զոհեր չեն եւ ոճրագործ է ոչ միայն Գերմանիան: Մենք դեռ չենք հոգնել եւ բավականաչափ ուժեղ ենք Իսրայելի եւ մյուս երկրների կառավարություններին տանելու ցեղասպանության ճանաչման ճանապարհով, իսկ վերջին փուլում՝ հաշտեցման ճանապարհով»:

Իսրայելի «Բաց համալսարանի» պրոֆեսոր Յաիր Օռնը հանդես եկավ «Իմացության տառապանքը. Հոլոքոստի եւ ցեղասպանության հարցերը կրթության մեջ» զեկուցմամբ: Խոսելով ցեղասպանության երեւույթի բաղադրիչների՝ իրականացնողների եւ աջակցողների մասին, նա շեշտեց երրորդ խմբի՝ անտարբերների պատասխանատվության մասին: «Իհարկե, այսօրվա երիտասարդները, այդ թվում՝ թուրքերը պատասխանատու չեն անցյալի իրողությունների համար, սակայն պատասխանատու են, թե ինչ տեղ կզբաղեցնի Հայոց ցեղասպանությունը իրենց ազգի ու երկրի պատմական հիշողության մեջ:

Կրթությունը ցեղասպանությունների կանխարգելման պայքարի մի մասն է, սակայն իրականությունը շատ ավելի բարդ է», ասաց Օռնը: Համեմատության համար նա ասաց, որ Հոլոքոստի պատմության ակադեմիական չափանիշներն ընդգրկված են 26 երկրների կրթական ծրագրում, իսկ Հայոց ցեղասպանությունը՝ 4 երկրների ծրագրում, ընդ որում վերջինը դասագրքերում ներկայացված է բավականին մակերեսորեն, պարզեցված, անգամ՝ անճշտություններով: «Վերջին տարիներին իրազեկությունը փոքր-ինչ բարձրացել է, հիմնականում ջանացողների եւ նվիրյալների շնորհիվ: Սակայն տխրությամբ պետք է նշենք, որ Թուրքիայի գործադրած ճնշմամբ այս տարի Գերմանիայի Բրանդենբուրգի նահանգի դպրոցական դասագրքերից հանվեց Հայոց ցեղասպանության մասին հիշատակումը»: Նա հավելեց, որ Հայոց ցեղասպանության մասին իմացությունը հատուկ կարեւորություն ունի Իսրայելում, որի ժողովրդի ինքնության եւ պատմական հիշողության մեջ առանձնահատուկ տեղ ունի Հոլոքոստը, մինչդեռ իսրայելցիների իմացության մակարդակը բավականին վիճաբեցնող է: Հայոց ցեղասպանության դասավանդման վերաբերյալ այնտեղ կա 2 մոտեցում. ըստ առաջինի ընդհանրապես չպետք է դասավանդվի, ըստ երկրորդի՝ պետք է դասավանդվի այլ ցեղասպանությունների հետ համեմատելու նպատակով: Օռնի մոտեցմամբ, Հոլոքոստը եւ Հայոց ցեղասպանությունը պետք է դասավանդվեն որպես մեկ միասնական առարկա:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Խուան Մենդեզը բերանը չուր էր առել

Հրեաները չէին հանդուրժի, եթե ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդականը նման վիրավորական ելույթ ունենար Հոլոքոստի մասին

Ցեղասպանությունների կանխարգելման հարցերով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդական Խուան Մենդեզի՝ Հայոց մեծ եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված միջազգային համաժողովում ունեցած ելույթն այլ կերպ, քան վիրավորական եւ անտեղի, չես համարի: Պրն Մենդեզի ելույթից այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ նա դա գրել է ընդհանուր օգտագործման նպատակով եւ նույն տեքստը կարդում է այլ համաժողովներում:

«Ծանրագույն հանցանք, ծայրագույն մարտահրավեր. մարդու իրավունքները եւ ցեղասպանությունը» միջազգային համաժողովի մասնակիցները եւս զարմացած եւ զայրացած էին Մենդեզի ելույթի ոգուց: Ընդմիջմանը հատկապես հայ պատգամաբանները, քաղաքական ու պետական գործիչները նշում էին, որ «Մենդեզը նման ելույթ կարող էր ունենալ Թուրքիայում» կամ «կարող էր ավելի լավ ելույթ պատրաստել»:

Եթե ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդականը նման ելույթ ունենար Հոլոքոստին նվիրված որեւէ գիտաժողովում, ապա հրեաները, անկասկած, թույլ չէին տա, որ նա

Խուան Մենդեզ

շարունակի խոսքը: Ելույթի հենց սկզբից Մենդեզը որեւէ անգամ չհիշատակեց ո՛չ Հայոց ցեղասպանությունը, ո՛չ էլ օգտագործեց հայկական ջարդեր, տառապանքներ կամ նմանատիպ այլ որակումներ:

Ի դեմ, Մենդեզին երեկ ընդունեց Հայաստանի նախագահը: Ցեղասպանության կանխարգելման հարցերով հատուկ խորհրդականը լկտիությունը չթաքցնելով՝ Ռոբերտ Քոչարյանին ասել է, որ իր մասնակցությունը Երեւանում մեկնարկած միջազգային համաժողովին խոսում է այն մասին, որ մեծ ցանկություն կա հասկանալու եւ գնահատելու, թե ինչ է կատարվել անցյալ դարասկզբին հայ ժողովրդի հետ: Մենդեզն ասել է, որ ժողովրդի պատմական հիշողությունն այս գործում լավ օգնական է եւ հնարավորություն կտա միջազգային հանրությանը լիարժեք պարզաբանելու կատարվածը:

Քոչարյանը, ինչպես հաղորդում է ՀՀ նախագահի մամլո գրասենյակը, նշել է, որ Հայոց եղեռնի իրականացման ականատես ժամանակակիցներից ոչ ոք կասկածի տակ չի դնում դրա բուն էությունը, եւ հայ ժողովուրդն այսօր ընդամենը թարմացնում է միջազգային հանրության հիշողությունը: Քոչարյանն ասել է, որ Հայաստանը շարունակում է մեծ ակնկալիքներ ունենալ միջազգային հանրությունից Հայոց ցեղասպանության փաստին արդարացի գնահատական տալու գործում:

Համաժողովի առաջին օրը ելույթ ունեցած արտգահմանցի հյուրերը դատապարտե[illegible] Օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի դեմ կատարվածը: Այսպես, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի նախկին քարտուղար, իրավունքի պրոֆեսոր **Ալֆրեդ դե Զայասը** նշեց, որ Առաջին աշխարհամարտի ռազմական գործողությունների ֆոնի տակ թուրքերը կոտորեցին մեկուկես միլիոն հայերի: Զայասն ասաց, որ Թուրքիան մինչեւ օրս օկուպացիայի տակ է պահում հայկական հողերը, հայկական մշակութային ժառանգությունը մնացել է Թուրքիայի տարածքում, եւ հայ ժողովուրդն իրավունք ունի հետ սպանելու: Իրավունքի պրոֆեսորը նշեց, որ հայկական եկեղեցիները վերածվում են մզկիթների, ապա հոետորական հարց տվեց՝ պատկերացրեք, ինչ կլիներ, եթե Գերմանիան հրեական սինագոգները վերածեր եկեղեցիների:

Մարդու իրավունքների իռլանդական կենտրոնի տնօրեն **Վիլյամ Շաբասը** նշեց, որ 1915 թ. հայկական ջարդերը համապատասխանում են ցեղասպանություն բնորոշմանը: Ճապոնացի պրոֆեսոր **Հիրոյուկի Սեգավան** նկատեց, որ Օսմանյան Թուրքիայում հայերի զանգվածային կոտորածը պետք է որակվի ցեղասպանություն:

ԹԱԼԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ

Տասը տարի անց. Հայաստանի առաջին եւ գործող ...

1-ին էջից

Նախագահը Մեծ եղեռնի ճանաչումը կարեւորեց նաեւ հետագայում ցեղասպանության հանցագործությունները կանխելու համար, ավելին՝ ճանաչումը կարեւոր է հայ-թուրքական հարաբերությունների համար, «քանի որ կա մեր երկու ժողովուրդների միջեւ առկա բազմաթիվ հարցերի պատասխաններ եւ հնարավորություն կընձեռի նայելու դեպի ապագա»:

«Մենք հիշում ենք անցյալը ցավով, բայց առանց ատելության: Մեզ համար դժվար է ընկալել թուրքական կողմի արձագանքը, որ արտահայտվում է ոչ միայն անցյալի հերքմամբ, այլեւ ներկա Հայաստանի շրջափակմամբ: Մենք բախվել ենք իմաստավորում պահանջող պարադոքսի: Ցարացած է ողբերգական անցյալի համար պատասխանատու կողմը, այլ ոչ թե զոհը: Մենք վստահ ենք, որ ցեղասպանության միջազգային ճանաչումը կօգնի Թուրքիային հաշտվել իր իսկ անցյալի հետ, հաղթահարել մի բարդույթ, որ սերնդեսերունդ փոխանցվելով նորանոր կնճիռներ է ստեղծում հարեւան մեր ժողովուրդների հարաբերություններում», ասաց ՀՀ նախագահը:

Տասը տարի առաջ ճիշտ այս օրերին տեղի ունեցավ Մեծ եղեռնի 80-րդ տարելիցին նվիրված միջազգային գիտաժողով: Առաջինը խոսք տրվեց ՀՀ առաջին նախագահին: Լեւոն Տեր-Պետրոսյանը Հայոց ցեղասպանության մասին իր մոտեցումները ներկայացրեց 7 առանձին կետերով, որոնցից երկուսը վերաբերում էր Դաշնակցությանը: Ըստ էության, այդ գիտաժողովը կամա թե ակամա քաղաքականացվեց, ստացավ ներքաղաքական իմաստ, քանի որ Հայոց ցեղասպանության մեջ մեղադրվել էր նաեւ ՀՅԴ-ն, որը դրանից մի քանի ամիս առաջ կասեցվել էր Հայաստանում:

Տեր-Պետրոսյանն առաջին կետով անտեղի էր համարել Հայոց ցեղասպանության բացատրությունը հայ եւ թուրք ժողովուրդների կրոնական, էթնիկական, ռասայական անտագոնիզմով, ինչը վիճարկեցին համաժողովին մասնակցող մի շարք գիտնականներ:

«Ցեղասպանության կործանարար հետեւանքներից խուսափելու վերջին հնարավորությունը հայ ժողովուրդը կորցրեց 1914 թ., երբ Էրզրումում գումարված ՀՅԴ 8-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ պարտականություն ստանձնեց մասնակցել Օսմանյան կայսրությունում հայտարարված ընդհանուր զորահավաքին», ասել էր առաջին նախագահը: Բացի այդ, 1920 թ. Հայաստանի «վարիչները չկարողացան ճիշտ գնահատել Ռուսաստանի եւ ֆեմալական Թուրքիայի հզորացմամբ ստեղծված նոր իրադրությունը, որի պատճառով կորցրին թե՛ Հայաստանի անկախությունը, թե՛ տարածքների մի մասը»:

«Այսօր Հայաստանը եւ Թուրքիան որպես հարեւան պետություններ պարտավոր են հաստատել փոխշահավետ առեւտրատնտեսական կապեր եւ բարիդրացիական հարաբերությունների միջոցով ստիպաբար հաղթահարել պատմական հակասություններն ու վերականգնել հայ եւ թուրք ժողովուրդների փոխադարձ վստահությունը, որի համար կողմերից պահանջվում է քաղաքական կամք եւ բարոյական կեցվածք», ասաց տարի առաջ ասել էր Հայաստանի առաջին նախագահը:

Ցեղասպանություն-90

Ինչպես տեղեկանում ենք Բունդեսթագի ինտերնետային էջից, ապրիլի 21-ին Բունդեսթագի 172-րդ նիստում ընթերցվելու է Հայոց ցեղասպանության վերաբերյալ Քրիստոնեա-դեմոկրատների եւ Քրիստոնեա սոցիալիստների միության հայտարարության տեքստը: 09.00-21.00 սահմաններում ընթացող նիստում հայոց հարցը 6-րդն է, եւ ինչպես նույն աղբյուրն է փաստում, դրան հատկացված 45 րոպեի ընթացքում բոլոր կուսակցությունները պիտի հայտնեն իրենց կարծիքը: Ըստ վերջին օրերին անցկացած մեր հարցախույզի, Հայոց ցեղասպանության վերաբերյալ Բունդեսթագում միասնական դիրքորոշում, համաձայնեցված կարծիք դեռ չկա: (Սրա մասին վկայում էր ARD-ի ապրիլի 14-ին հեռաստված հաղորդումը, իսկ ավելի վաղ՝ ապրիլի 11-ին գերմանական լրատվամիջոցներից մեկի՝ բերլինյան «Թագեսցայթգեյի» հարցմանն ի պատասխան սոցիալ-դեմոկրատների պատգամավորական գրասենյակից հաստատել էին վերոնշյալը՝ տեղեկացնելով, թե Բունդեսթագում ներկայացվելու է միայն ՔԴՄ-ՔՍՄ առաջարկը, իսկ քննարկման ընթացքից պարզ կդառնա, թե արդյոք հնարավո՞ր է կուսակցությունների ընդհանուր նախագիծ մշակել: Հիշեցնենք, որ ՔԴՄ-ՔՍՄ-ն իր հեղինակած առաջարկի տեքստում խուսափել էր ցեղասպանություն բառեզրից, կասարվածը ջարդ, եղեռն (Massaker) որակելով:

Վերլուծաբանների ենթադրմամբ, ինչի մասին հստակ խոսում ու գրում են գերմանացի լրագրողները, Շրյոդերի՝ մայիսին Թուրքիա կատարելիք այցի նախօրեին դժվար թե պաշտոնական Գերմանիան իր երբեմնի դաշնակցին եւ այսօրվա գործընկերոջը վիրավորող որեւէ քայլ անի, մանավանդ որ Եվրոպայում բնակվող 4 միլիոն թուրքերի 2,5 միլիոնը հենց Գերմանիայում է ապրում:

Ինչ ակնկալիքներ ունեն գերմանահայերը Բունդեսթագից՝ մեր հարցմանն ի պատասխան, ինչպես եւ սպասելի էր, շատերը նույն կերպ ձեւակերպեցին՝ ճանաչում: Միայն թե մեր հայրենակիցների սվար մասը թերահավատ է, թե գերմանացի քաղաքական գործիչները անաչառ կլինեն ու պատմական եղելությանը իրավական ճշգրիտ ձեւակերպում կտան: Բունդեսթագում այդ օրը մի քանիսը ապուր կեփեն, հետո ջուր կլցնեն, կխառնեն, կխառնեն, ու մենք գոլորշին կտեսնենք, ձեւակերպում է Թուրքիայում ծնված գերմանահայերից մեկը:

Բոխումի Ռուր համալսարանի Սփյուռք եւ ցեղասպանություն ինստիտուտի տնօրեն դոկտ. Միհրան Դաբաղի մեկնաբանությունը ներկայացնենք. «Հայտարարությունը 2 կարեւոր հատկանիշ ունի, առաջին՝ հրաժարած են «ցեղասպանություն» իրավաբանական բառեզրեն, երկրորդ՝ Ցեղասպանության հետեւանք եւ անոր հիշողությունը կրող կառույցը՝ Սփյուռքը տեղ չի գտավոր ձեւակերպման մեջ: Ասիկա շատ նշանակալից է, ցույց կուտա գերմանական եւ եվրոպական ռազմավարությունը. այն է՝ ջնջել արեւմտահայ հատվածը նաեւ հիշողութենեն, որ կնշանակե շարունակել դահիճին ծրագիրին իրականացումը: Հայաստանն իբրեւ պետական կառույց՝ բեռնավորված իր հարցերով, ավելի խոցելի է, կարելիություն ունի զիջումներու տեղի տալ: Եղեռնով վիրավոր ժողովուրդ մը ստիպել իր պատմությունը եթե չուրանալ, ապա զայն ձեւափոխել՝ բոլորի կողմե ընդունելի սահմանումի ստիպել»: Պարոն Դաբաղն ակնարկում է հաճախ գործածվող այն նախադասությունը, թե երկու ժողովուրդների հարաբերությունները պիտի նորմալանան: «Հայաստանի մեջ շատ կսիրեն նորմալ բառը», կարծիք է հայտնում ինստիտուտի տնօրենը: Ցեղասպանության պատմության ժառանգորդի հետ կարելի չէ նորմալ հարաբերություն ունենալ, այն պիտի ըլլա մասնավոր եւ պիտի կրե ցեղասպանության հետեւանքներու պատասխանատվությունը: Թրքական կողմի՝ ցեղասպանության ճանաչման հակառակելու պատճառներեն մեկն ալ այն է, որ կմոռնեմք, թե ոչ թե նորմալ, որով կրնա իրեն ամեն բան արտոնել, այլ տարբեր հարաբերություններ պիտի ստեղծել: Եղեռնված ժողովուրդի հետ կարելի չէ նորմալ հարաբերություն ունենալ, այլ՝ մասնավոր: Մասնավոր կնշանակե Հայաստանի Հանրապետության բացարձակ անվտանգության երաշխավորում, երբեք չարտոնել սպառնալիքը, բոլոր ջանքերը գործադրել այդ մնացորդացի ապահով զարգացմանն ի նպաստ, ներառելով նաեւ տնտեսական խնդիրները: Ցեղասպանության հարցը պետք չէ երբեք հնարավոր բեռ մը նկատել, ան մեր պատմությունը կդարձնե «տարբեր» ու այդ պատճառավ մասնավոր հետաքրքրության արժանի: Արեւելահայությանն անհրաժեշտ է վճռականություն, որպեսզի Հայաստանն իր առանձնահատկությունը նորմալացումներու զոհ չդարձնե, այլեւ Սփյուռքի հետ միասնաբար պաշտպան դառնա այդ պատմության»:

Սփյուռք եւ ցեղասպանություն ինստիտուտի տնօրենը հետադարձ հայացք նետելով Հայ-թուրք հաշտեցման հանձնաժողովների աշխատանքին, վկայաբերեց թուրք լրագրողների գնահատականը՝ «Ժամանակ շահելու քաղաքականություն մըն է, որպեսզի թուրքական ընկերությունեն ներս ջնջեն հայկական ներկայության հետ կապված հիշողությունը, որ տակավին լսելի է ընտանեկան պատումներու մեջ: Ստեղծել հայկական հիշողությունեն զուրկ թուրքական ընկերություն: Ուր որ հիշողություն չկա, չկայի մասին կարելի չէ խոսիլ: Հիշողությունե զուրկ ընկերության մը հետ կարելի չէ երկխոսություն ստեղծել, նույնիսկ հաշտության մասին խոսել: Հանձնաժողովը քաղաքական լուծում մը պիտի բերե, ոչ թե ուսումնասիրե: Հայոց ցեղասպանության հարցը պատմաբաններու հարց չէ. պատմագրությունը կատարածը ցեղասպանություն որակելու ուսումնասիրությունը կատարեց: Արժանի ձեւով ցեղասպանության ուսումնասիրություն կարելի է կատարել, երբ ան ճանչված է, երբ գիտնականն ազատ է՝ առանց ցեղասպանությունը ճանչեցնել տալու բեռին», ասում է դոկտ. Դաբաղը՝ նկատել տալով, թե սա կանխարգելող նշանակություն կունենա:

Վերադառնալով մեր գլխավոր հարցման, թե պաշտոնական Բեռլինից ի՞նչ ակնկալիքներ ունի, ինստիտուտի տնօրենն ասաց, թե «ի հետեւանք իր նացիոնալ-սոցիալիստական քաղաքականության, Գերմանիան հետհոլոքոստյան հիշողության քաղաքական մշակույթ ստեղծեց, որով ցեղասպանություններու ուրացման հանդեպ հստակ դիրքորոշում կպահանջե: Հոլոքոստի պարագային վերոհիշյալը օրենսդրորեն պաշտելի է, եւ Գերմանիան դժվարություն չունի Կոսովոյի մեջ պատահածը ցեղասպանություն կոչելու: Հայերու պարագային, մանավանդ իր մեղսակցությունը նկատի առնելով, անընդունելի է քաղաքական նկատառումներով չկոչել այն, ինչ որ է՝ ցեղասպանություն: Կհուսամ, թե Բունդեսթագի այս հայտարարությունը փորձ պիտի չմնա այս նյութեն ձերբազատվելու եւ իր պատմությանը գիտակից՝ կզարգացնե իր պատասխանատվությունը, որուն այդքան պետք ունի այս զոհված ժողովուրդը»:

ԼՈՒԻԶԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

ԳԵՐՄԱՆԻԱ

Լրագրողներն ամեն ինչ ասել են, ամբիոնը քաղաքական գործիչներինն է

Այսօր Բունդեսթագում քննարկման կդրվի Հայոց ցեղասպանության մասին ընդհանության առաջարկը

«21-րդ դարն առանց ցեղասպանությունների»

«Յուրաքանչյուր հայ իր խոսքը պիտի ասի եղեռնի մասին», ասաց Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Ռաֆայել Եդոյանը**՝ բացելով ինստիտուտի պատմության եւ գրականության ամբիոնների կազմակերպած երկօրյա գիտաժողովը, որը կրում էր «21-րդ դարն առանց ցեղասպանությունների» նշանաբանը:

Դարասկզբին իրականացված Հայոց ցեղասպանությանը ցասումով ու վրեժխնդրությամբ պատասխանելու ինքնաստիպ կոչ էր Գուգարաց թեմի առաջնորդ **Սեբուհ եպս. Չուլջյանի** ուղերձը՝ հասցեագրված ոչ միայն ներկաներին, այլեւ ողջ հայությանը: «Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, ցավոք, մեծ տերությունների ձեռքին դարձել է խաղաթուղթ, ասաց սրբազանը: Նույն Եվրոպան, որն այսօր հանդես է գալիս իրավական բարձր արժեքների դիրքերից եւ հանդուրժողության կոչում, ժամանակին պիղատոսյան անտարբերությամբ ու լռությամբ հանդուրժեց միլիոնավոր անմեղ հայերի կոտորածը»:

Ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամսոն Քաջյանը** զեկուցում կարդաց «Թուրքերը Հայոց ցեղասպանության մասին» թեմայով՝ ելույթի առանցքում պահելով թուրքական տարբեր հրատարակություններում հայկական հարցի շարունակական նենգափոխությունները: Բանախոսը հարկ համարեց հիշեցնել, որ 20-րդ դարասկզբին հայ ազգաբնակչությունն Օսմանյան կայսրությունում զբաղեցնում էր անգամ նախարարական աթոռներ, ինչպես նաեւ տնտեսական, մշակութային-լուսավորչական գործունեություն էր իրականացնում:

Ինստիտուտի գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելս Սանթոյանն** անդրադարձավ հայ գրականության դասականներին: Նա հիշեցրեց, որ ցեղասպանությունն իրականացվել է դեռեւս 19-րդ դարավերջից մինչեւ 1922 թվականը (անգամ՝ մինչեւ 1937 թ., երբ վերջնականապես հայաթափվեց Սանջակի մարզը): Ուստի ուրիշ ո՞վ, եթե ոչ Չարենցը, ով ականատեսն ու մասնակիցն էր այդ իրադարձությունների եւ հասել էր մինչեւ Վան՝ ազատագրելով Նարեկը, պետք է իր «Դանթեական առասպելում» արտացոլեր այդ ամենը՝ զուգահեռելով Դանթեի դժոխային թեմայի հետ: Տարիներ անց, խորհրդային «մոռացության» ժամանակներում իր «Հայոց դանթեականը» ստեղծեց եւ Հովհաննես Շիրազը:

«Հայերի ցեղասպանությունը Փամբակի եւ Շիրակի գավառներում 1918-1920 թվականներին» թեմայով զեկուցում էր պատրաստել պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների թեկնածու **Սասունիկ Վիրաբյանը**:

Գիտաժողովն ամփոփվեց «Եվրոպական մեծ տերությունները եւ Հայոց ցեղասպանությունը», «Հայոց մեծ եղեռնը եւ դրա անդրադարձը հայ գրականության մեջ», «Մուսավաթական Ադրբեջանի հայակործան քաղաքականությունը 1918-1920 թվականներին» թեմաներով զեկուցումներով. կարդացին գիտությունների թեկնածուներ **Ֆելիքս Մովսիսյանը, Հովհաննես Այվազյանը, Յուրա Ղուլյանը**: Զեկուցում կարդաց նաեւ բանասիրական գիտությունների թեկնածու **Լիլիթ Անտոնյանը**. նրա ղեկավարությամբ բանասիրական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները հանդես եկան եղեռնի զոհ դարձած գրողների հիշատակին նվիրված գրական-երաժշտական կոմպոզիցիայով:

Մեծ եղեռնին նվիրված միջոցառումները մարզկենտրոնում շարունակվում են: Ապրիլի 22-ին կերպարվեստի թանգարանում կբացվի Վանաձորի գեղանկարիչների աշխատանքների ցուցահանդես, Մ. Թավրիզյանի անվան երաժշտական ուսումնարանում համերգով հանդես կգա Վանաձորի կամերային նվագախումբը:

Ապրիլի 23-ին նույն ուսումնարանում տեղի կունենան հանդիսավոր նիստ եւ «Անլռելի զանգակատուն» վերտառությամբ գրական երաժշտական կոմպոզիցիա կամերային երգչախմբի կատարմամբ, իսկ Հովհ. Աբելյանի անվան թատրոնում հանդիսատեսի դատին կհանձնվի «Ջայն անապատի» ներկայացումը:

Ապրիլի 24-ին կկազմակերպվի խաղաղ երթ Հայքի հրապարակից դեպի Սուրբ Աստվածածին եկեղեցի՝ «Կարդանաց հետնորդներ» թմբկահարների խմբի ուղեկցությամբ: Եկեղեցում կմատուցվի Սուրբ պատարագ, իսկ Նահատակաց պուրակի խաչքարի առջեւ՝ հոգեհանգստյան արարողություն: Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում կներկայացվի Էդգար Հիլզենրաթի «Հավատա քո Աստծուն» ստեղծագործությունը: Եղեռնին նվիրված միջոցառումների լայն ծրագիր է նախատեսված նաեւ մարզի մյուս քաղաքներում:

ՄԱՐՎԵԼ ՄԻՔԱՅԵՆ

«Հայ ժողովրդի կորուստներն Առաջին աշխարհամարտի տարիներին» գիրքը

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, պատմական գիտությունների դոկտոր **Լավրենտի Բարսեղյանի** խմբագրությամբ ընթերցողի սեղանին է դրվել բանասիրական գիտությունների թեկնածու, գրականագետ, խմբագիր, հրատարակիչ ու լրագրող **Անուշավան Զաքարյանի «Հայ ժողովրդի կորուստներն Առաջին աշխարհամարտի տարիներին»** աշխատությունը: Գրքում զետեղված փաստաթղթերն ու նյութերը, հնարավորություն են տալիս օբյեկտիվ պատկերացում կազմելու եւ գնահատելու Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի կրած վնասների հաշվառման ու դրանց փոխհատուցման ուղղությամբ Թիֆլիսում 1918 թ. վերջից մինչեւ 1920 թ. սկիզբը գործող «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների ճշգրիտ հանձնաժողովի» գործունեությունը, որը ցայսօր հանրագիտության է մատնված: Ժողովածուն նախատեսված է ինչպես մասնագետների, այնպես էլ ընթերցող լայն հանրության համար:

Անուշավան Զաքարյանը ծնվել է պատմական Գողթան գավառի Փառակա գյուղում: Բանասիրական կրթություն ստանալուն զուգահեռ մշտապես զբաղվել է մեր պատմական փաստերի ուսումնասիրություններով: Նրա քննադատական աշխատանքի արդյունքում ստեղծվել են հինգ մենագրություններ եւ շուրջ հարյուր գիտական հոդվածներ ու հրապարակումներ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ԱՐԽԻՎԱԳԵՏ

Իտալիայի ԱԳՆ արխիվներում պահպանվող Հայկական հարցին եւ Հայոց ցեղասպանությանն առնչվող նյութերը

Եվրոպական գերտերությունների Կոստանդնուպոլսում գտնվող դեսպանատները, որ ականատեսը եղան Առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանությանը, բավականին հարուստ նյութեր են ուղարկել իրենց կառավարություններին: Դրանք այժմ գտնվում են արխիվային ֆոնդերում:

Իտալիան ժամանակի այն միակ գերտերությունն է, որի արխիվներում պահվող Հայոց ցեղասպանությունն արձանագրող նյութերը մինչ օրս անհայտ էին մեր հասարակությանը, չնայած իտալական պաղլամենտը 2000 թ. նոյեմբերին ճանաչել ու դատապարտել է Օսմանյան կայսրությունում կատարված Հայոց ցեղասպանությունը:

1990-ականների վերջին Ֆլորենցիայում կազմվեց մի հանձնաժողով, որը սկսեց հավաքել եւ տպագրել Հայաստանին առնչվող իտալական դիվանագիտության փաստաթղթերը: Անգնահատելի այս աշխատանքի արդյունքում՝ իտալերենով արդեն ընթերցողին են հանձնվել 1891-1895 թվականների արխիվային նյութերը, որոնք նոր լույս են սփռում հայ ժողովրդի հանդեպ վարվող աբդուլ-համիդյան վարչակարգի քաղաքականության, եվրոպական տերությունների եւ մասնավորապես Իտալիայի կառավարության դիրքորոշման վրա:

1912 թվականի վերջից Ռուսաստանի նախաձեռնությամբ եվրոպական տերությունները նոր թափով վերսկսեցին Արեւմտյան Հայաստանի բարեփոխումների մասին ծրագրի քննարկումները: Գերտերությունների շահերի ոլորտում հայտնված հայ ժողովուրդը դարձյալ սկսեց թուրքական լծից ազատվելու հույսեր տածել, սակայն սկսված պատերազմը օսմանյան կառավարությանը հնարավորություն ընձեռեց ոչ միայն ձախողել բարեփոխումների իրականացումը, այլեւ մեկընդմիտ լուծել հայկական հարցը՝ բնաջնջելով իր պատմական հայրենիքում բնակվող հայ ժողովրդին եւ հիմք ստեղծել պանթուրքիզմի գաղափարախոսությունը իրագործելու համար:

Ահա բարեփոխումների այս ծրագրի քննարկումներին եւ Հայոց ցեղասպանությանը վերաբերող իտալական դիվանագիտության փաստաթղթերը ուսումնասիրելու նպատակով 2005 թ. փետրվարին Իտալիայում ՀՀ դեսպանատան միջնորդությամբ իրավունք ստացա ուսումնասիրություններս Իտալիայի արտաքին գործերի նախարարության արխիվում սկսելու:

Ֆառնեզինյան դղյակի դիվանագիտական արխիվում պահպանվող Հայաստանին ու հայ ժողովրդին առնչվող փաստաթղթերը զետեղված են արխիվային տարբեր ֆոնդերում:

1. Քաղաքական շարք Պ (Serie Politiche P) 1891-1916:

Արխիվային այս ֆոնդում Հայաստան (Armenia) անվան տակ գտնվում են ութ թղթապանակներ. 325 (1891-1895 թթ.), 326 (1894-1896 թթ.), 327 (1895 թ.), 328 (1895 թ.), 329 (1895 թ.), 330 (1896 թ.), 331 (1896-1906 թթ.) եւ 332 (1907-1914 թթ.): Փաստաթղթերի այս խումբը հիմնականում առնչվում է աբդուլհամիդյան վարչակարգի ժամանակաշրջանին: Սրանց մի մասն, ինչպես նշեցինք, արդեն տպագրել է Ֆլորենցիայի հանձնաժողովը: 332 թղթապանակում նյութերն առնչվում են հիմնականում 1913-14 թվականների վերը հիշատակված բարեփոխումների ծրագրի քննարկումներին: Քաղաքական շարքի այս փաստաթղթերի մի զգալի մասը 6 հատորով տպագրել է նաեւ Իտալիայի արտգործնախարարությունը՝ բացառապես ներքին օգտագործման համար, եւ նույնպես գտնվում է դիվանագիտական այս արխիվում Armenia-LXVI անվան տակ:

2. Քաղաքական արխիվ- ընդհանուր եւ գրասենյակային (Archivio Politico-ordinario e di gabinetto) 1915-1918:

Արխիվային այս ֆոնդում Հայաստանին առնչվող փաստաթղթերը գտնվում են 44 թղթապանակում եւ ընդգրկում են 1915-1918 թվականների դեպքերը: Թղթապանակն այդքան էլ հարուստ չէ, բայց եւ այնպես արժեքավոր նյութեր է պարունակում, որոնք վկայում են Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի դեմ իրականացրած ցեղասպանության մասին: Չնայած թղթապանակն ընդգրկում է 1915-1918 թվականները, 1916 եւ 1917 թվականների մասին գրեթե ոչ մի փաստաթուղթ չկա, իսկ 1918 թվականի նյութերն էլ հիմնականում վերաբերում են Պողոս Նուբար Փաշայի գլխավորած Փարիզում գտնվող ազգային պատվիրակությանը:

3. Քաղաքական գործեր (Affari politici) 1919-1930:

Այստեղ Հայաստանին առնչվող երկու թղթապանակներ կան, որոնք գտնվում են 809 եւ 810 համարների տակ: Սրանցից առաջինն ընդգրկում է 1919-1922, իսկ երկրորդը՝ 1922-1930 թվականները: Փաստաթղթերը վերաբերում են քաղաքական անցուդարձերին, հայ որբերին, Իտալիայում գործող հայամետ կոմիտեի գործունեությանը, հայ փախստականներին Հայաստան վերադարձնելու Իտալիայի աջակցությանը, Թուրքիայում հայերի զավթված ունեցվածքին եւ այլն:

4. Խաղաղության կոնֆերանսներ (Conferenze della pace) 1919-1923:

Այս ֆոնդում պահպանվող նյութերի մեջ պահպանվել են խաղաղության տարբեր կոնֆերանսներում Հայկական հարցին վերաբերող քննարկումների արձանագրությունները, որոնք չափազանց կարեւոր են:

Այս չորս հիմնական խմբերից բացի, ուսումնասիրություններս ցույց են տալիս, որ Հայաստանի եւ Հայոց ցեղասպանության մասին նյութեր կան նաեւ տարբեր արխիվային ֆոնդերում գտնվող Թուրքիային առնչվող փաստաթղթերում: Սրանք այժմ ուսումնասիրվում են, եւ հուսով եմ, որ բացի արդեն հայտնաբերված նյութերից, կգտնվեն նաեւ ուրիշները: Թուրքիային առնչվող փաստաթղթերի մի զգալի մասը՝ 25 հատորով եւս տպագրվել է Իտալիայի արտգործնախարարության կողմից, դարձյալ ներքին օգտագործման համար եւ գտնվում է Turchia-XVI անվան տակ: Սրանցից 13-րդ հատորում, որն ընդգրկում է 1909 թվականի դեպքերը, որոնք նյութեր կան, որոնք արձանագրում են Կիլիկիայում հայոց կոտորածները, իսկ 1915 թիվն ընդգրկող 25-րդ հատորում՝ Մեծ եղեռնը:

Դեռեւս պետք է ուսումնասիրվեն Լոնդոնի, Փարիզի, Ս. Պետերբուրգի, Բեռլինի, Վիեննայի, եւ որ ամենակարեւորն է Կ.Պոլսի Իտալիայի դեսպանատան արխիվային նյութերը: Վերջինս այժմ լրացվում է, քանզի պակասում էին մի շարք թղթապանակներ, եւ ինչպես ինձ տեղեկացրին, այդ նոր թղթապանակներում եւս հանդիպում են Արեւմտյան Հայաստանին առնչվող փաստաթղթեր:

Այս ուսումնասիրությունների արդյունքում վերջապես կունենանք նաեւ Իտալիայի դիվանագիտական արխիվի նյութերը, որոնք Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հասնելու մեր պայքարում, արդեն հավաքված բազմաթիվ փաստաթղթերի հետ կնպաստեն վերջնական հաջողությանը հասնելուն:

ԱՐԱՄԱՅԻՍ ԲԱԼԱՅԱՆ
Հռոմ

Բենեդիկտ 16-րդը վերջին 100 տարում ընտրված «ամենածեր» պապն է

Երեկ «Ազգը» տեղեկացրեց, որ Երեւանի Քանաքեռ-Զեյթունի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն նվիրված հոգեւոր տոնի օրը Երեւան

ԱԶԳ

Մեկնաբանություն

2004թ. դեկտեմբերի 9-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը մասնակիորեն բավարարեց ԱՄՆ քաղաքացի Ջորջ Նաջարյանի բողոքը: Դատարանը որոշեց, որ քրեական գործով վարույթը պետք է շարունակվի, եւ Ջորջ Նաջարյանը ընդգրկվի որպես տուժող: ՀՀ գլխավոր դատախազությունը դեմ էր այս որոշմանը եւ այն բողոքարկեց ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարան: 2005-ի մարտին վերաքննիչ դատարանն անփոփոխ թողեց առաջին ատյանի որոշումը: Դատախազությունն այս անգամ բողոքարկեց Հայաստանի դատական համակարգի վերջին ատյան՝ ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վճռաբեկ դատարան: Մարտի 22-ին դատարանը կլսի այս գործը:

ՎԵՐՋԻՆ ՊՈՒԼ

Վճռաբեկ դատարանը կլսի Նաջարյանների գործը

Վճռաբեկ դատարանը պետք է կամ անփոփոխ թողնի նախորդ երկու ատյանների վճիռները, կամ գործը հետ ուղարկի վերաքննիչ դատարան՝ նոր կազմով քննելու:

Նաջարյանների ներկայացուցիչ Ասոն Պողոսյանը համոզված է, որ վճռաբեկն անփոփոխ է թողնելու դատական երկու ատյանների վճիռները: Սակայն կան հանգամանքներ, որոնք արդեն իսկ հակառակ եզրահանգումների տեղիք են տալիս:

Վճռաբեկ բողոքը գրեթե նույն՝ գլխավոր դատախազության քննչական մարմնի կողմից վերաքննիչ դատարան ներկայացված վերաքննիչ բողոքն է. ներկայացված են նույն պատճառաբանությունները, որոնք ամբողջությամբ եւ հիմնովին հերքվել են վերաքննիչ դատարանի կայացրած որոշմամբ: Գրեթե նույն բովանդակությամբ վճռաբեկ բողոք ներկայացրած դատախազությունը, այնուհանդերձ, սպասելիքներ ունի դատարանից:

Վճռաբեկ բողոքում ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչությունը, որպես բողոքը հիմնավորող լրացուցիչ նյութ, նշել է Գրիգոր Իգիթյանի վերաքննիչ դատարան ներկայացրած դիմում-հայտարարությունը: Այն ուղղված է հանրապետության Նախագահին: Այդ հայտարարության մեջ նշված են բազմաթիվ հանգամանքներ, որոնցից գլխավոր դատախազությունը առանձնացրել է մեկը, որ Ջորջ Նաջարյանը իր ներկայացուցչի միջոցով Գրիգոր Իգիթյանին առաջարկել է 150.000 դոլար՝ վիճարկվող շենքերը Նաջարյանին «զիջելու» դիմաց՝ դրանով փորձելով ցույց տալ, թե իբր Իգիթյանը ոչ մի խարդախություն չի կատարել: Գործի նյութերի ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ գլխավոր դատախազությունը նախաքննության ամբողջ ընթացքում համառորեն մերժել է Նաջարյանների իրավաբանների պահանջը ինչպես Ջորջ Նաջարյանին տուժող ճանաչելու, այնպես էլ Իգիթյանին մեղադրանք առաջադրելու վերաբերյալ: Սկզբում Նաջարյաններին ասել են, թե գործն ընթացքի մեջ է եւ շուտով կլուծվի, իսկ հետո Նաջարյանների հետ առանձնազրույցների ընթացքում գլխավոր դատախազության պաշտոնյաները նրանց փորձել են համոզել, թե Իգիթյանի արարքում ոչ մի հանցակազմ չկա եւ «խորհուրդ» են տվել հաշտության համաձայնություն կնքել: Միաժամանակ, գլխավոր դատախազությունը համառորեն մերժել է Նաջարյանների իրավաբանների խնդրանքը՝ ուսումնասիրելու համար իրենց տրամադրել գործի նյութերը: Այդ նյութերը տրամադրվել են միայն առաջին ատյանի դատարանում՝ Նաջարյանների կողմից գլխավոր դատախազության կարճման որոշումը բողոքարկելու ընթացքում: Պարզ է նաեւ, որ գլխավոր դատախազությունը չէր կարող ստուգել, թե իրականում Նաջարյանը նման առաջարկ Իգիթյանին արե՞լ է, թե ոչ, քանի որ գործն արդեն կարճել են, այլեւ ոչ ոքի չեն հարցաքննել, իսկ գործի նյութերում նման առաջարկի վերաբերյալ փաստեր գոյություն չունեն: Անհասկանալի է, թե ինչու է հիմա, այն էլ վճռաբեկ դատարանում, իր կողմից կարճման որոշման համար որպես արդարացում գլխավոր դատախազությունը մատնանշում մի հանգամանք, որն իրավական հիմք եւ նշանակություն չունենալուց բացի նաեւ ստուգված չէ:

ՀՀ նախագահին ուղղված հայտարարության մեջ Գրիգոր Իգիթյանը գրում է. «Համատեղ բիզնեսի պատրվակով Նաջարյանը երկար տարիներ ինձնից մեծ գումարներ էր կորզում, որոնք ես տրամադրում էի ոչ միայն նշված բիզնեսի իրականացման, այլ նաեւ Նաջարյանի եւ նրա կնոջ անձնական նպատակների համար»: Թե ինչ համատեղ բիզնեսի մասին է խոսում Գ. Իգիթյանը, հայտնի է միայն իրեն եւ դատախազության աշխատողներին, որովհետեւ նա իր վերջին ցուցմունքներում բոլորովին հակառակն էր ասել, թե Ջ. Նաջարյանի հետ համատեղ բիզնես չեն ունեցել: Գրիգոր Իգիթյանի հայտարարությունից կարելի է ենթադրել, որ Ջորջ Նաջարյանի ընտանիքը գոյատեւել է նրա շնորհիվ, իսկ Քերոլայն Նաջարյանի բարեգործական ծրագրերն իրականացվում էին իր փողերով: Դատախազության աշխատակիցները այդպես էլ չեն պարզել, թե Գրիգոր Իգիթյանը, որը վերջին տասը տարվա ընթացքում վաստակել է ընդամենը տասը հազար դոլար (քրեական գործում առկա են այդ ստացականները, տարբեր գերատեսչությունների հետ նրա պայմանագրերը եւ ստացականները), որտեղի՞ց էր այդքան մեծ գումարներ ծախսում:

Հայտարարության մեջ Գրիգոր Իգիթյանը մեղադրել է նաեւ լրատվամիջոցներին, մասնավորապես «Ազգ» օրաթերթին եւ «Արմենիա» հեռուստատեսությանը՝ իր դեմ «սադրանքների եւ զրպարտանքների մի նոր քարոզարշավ» սկսելու մեջ:

1992թ.-ի սեպտեմբերի 23-ին Վաշինգտոնվաղաքում Հայաստանի Հանրապետության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների միջեւ ստորագրվել է Ներդրումների փոխադարձաբար խրախուսման եւ պաշտպանության մասին պայմանագիր, որը մեր խնդրանքով մեկնաբանել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունը: Համաձայն այդ միջազգային պայմանագրի, որն արտացոլում է երկու երկրների միջեւ ներդրումների պաշտպանության բնագավառում հաստատված իրավական հիմքը եւ, ըստ մեր Սահմանադրության, գերակա է մեր օրենսդրության նկատմամբ, Հայաստանի եւ ԱՄՆ-ի ներդրողների համար սահմանվում է առավելագույն բարենպաստ իրավական ռեժիմ, որը նշանակում է, որ Հայաստանը եւ ԱՄՆ-ը պետք է միմյանց քաղաքացիների նկատմամբ կիրառեն ոչ նվազ բարենպաստ իրավական ռեժիմ, քան կիրառվում է իրենց կամ երրորդ երկրների քաղաքացիների նկատմամբ: Ներդրումների բռնագրավման եւ բռնագրավման համար փոխհատուցման վերաբերյալ միջազգային պայմանագիրը սահմանում է միջազգային իրավունքի կիրառման սկզբունքներ: Այդ իրավունքները կիրառելի են պետության կողմից ուղղակի եւ անուղղակի՝ բռնագրավմանը համարժեք միջոցների նկատմամբ, ուստի կիրառելի են նաեւ «քողարկված բռնագրավումների» նկատմամբ, որոնց արդյունքում ներդրողները զգալի չափով զրկվում են իրենց ներդրումների արդյունքից: Բռնագրավման նման դեպքերում միջազգային պայմանագիրը պահանջում է, որպեսզի փոխհատուցումը կատարվի անհապաղ, համարժեք եւ իրական ձեւով, ինչը պետք է համարժեք լինի մինչեւ բռնագրավումն իրականացնելու, կամ դրա մասին հայտնի դառնալու (կախված՝ թե որն է ավելի վաղ տեղի ունեցել) պահը բռնագրավված գույքի շուկայական արժեքին, եւ վճարվի առանց ուշացման՝ տոկոսներով հանդերձ: Միջազգային պայմանագիրը պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմ մյուս կողմի ներդրումների նկատմամբ ապահովի իրավունքների եւ հայցերի իրականացման արդյունավետ միջոցներ: Այն ապահովում է մի կողմի կառավարության եւ մյուս կողմի քաղաքացու կամ ընկերության միջեւ ներդրումային վեճերը (առանց նախօրոք տեղի դատարաններին դիմելու անհրաժեշտության) միջազգային դատարան ներկայացնելու իրավունքը, եւ յուրաքանչյուր կողմի ներդնողին շնորհում է կառավարության հետ վեճ ունենալու դեպքում իր ընտրությամբ միջազգային դատարան դիմելու ազատություն: Պայմանագիրն արգելում է ԱՄՆ-ի եւ Հայաստանի կառավարությունների կողմից մյուս կողմի քաղաքացիների ներդրումների նկատմամբ խտրական վերաբերմունքը եւ պահանջում է միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա արդարացի եւ անաչառ վերաբերմունք ներդրումների նկատմամբ:

Մինչդեռ գլխավոր դատախազությունը Նաջարյանների դեպքում չի ապահովել ոչ միայն առավելագույն բարենպաստ իրավական ռեժիմը, նրանց իրավունքների իրականացման արդյունավետ միջոցները, այլեւ, դատելով երկու դատարանների որոշումներից, նախաքննության ընթացքում խախտել է օրենսդրությունը եւ Նաջարյաններին զրկել իրենց իրավունքներից՝ նրանց ներդրումները փաստորեն ենթարկելով «քողարկված բռնագրավման» (հայտնի է, որ Իգիթյանն արդեն երկու տարի է արգելում է ոչ միայն Նաջարյանների, այլեւ նրանց շինարարների մուտքը Ջորագյուղի շենքեր): Ավելին՝ «քողարկված բռնագրավումը» դատախազությունը կատարել է առանց որեւէ փոխհատուցման՝ իբրեւ իր որոշման «լրացուցիչ հիմնավորում» ներկայացնելով չստուգված հանգամանքներ, որոնք վկայակոչվում են միայն Իգիթյանի կողմից:

Վերաքննիչ դատարանի որոշումն այս առումով նշում է հետեւյալը. «Նախաքննության մարմինը Ջ. Նաջարյանին տուժող չճանաչելով՝ թույլ է տվել քրեադատավարական օրենքի էական խախտում, որի արդյունքում վերջինս զրկվել ու սահմանափակվել է օրենքով երաշխավորված իրավունքներից եւ խոչընդոտվել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտումը, որոնք ազդել են գործով ճիշտ որոշում կայացնելու վրա: Վերսկսելով գործի քննությունը՝ նախաքննության մարմինը պարտավոր է Ջորջ Նաջարյանին ներգրավել որպես տուժող եւ նրա բերած փաստարկների շուրջ հավաքված ապացույցները ենթարկել բազմակողմանի եւ օբյեկտիվ ստուգման, ձեռք բերված յուրաքանչյուր ապացույցի վերլուծության, դրանք այլ ապացույցների հետ համադրելու եւ ապացույցների ձեռք բերման աղբյուրները ստուգելու միջոցով, յուրաքանչյուր ապացույց գնահատել վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգել համապատասխան հետեւության»:

Վճռաբեկ բողոք ներկայացնելով՝ գլխավոր դատախազությունը, փաստորեն, հրաժարվում է կատարել այս ամենը:

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան ներկայացման համաձայն՝ միջազգային պայմանագրով սահմանված պարտավորությունները տարածվում են կողմերի բոլոր քաղաքական ստորաբաժանումների վրա: Այսինքն՝ Նաջարյանները կարող են իրենց իրավունքների պաշտպանության համար դիմել նաեւ միջազգային՝ ներառյալ ԱՄՆ դատարաններ:

Քերոլայն Նաջարյանն այս օրերին Հայաստանում է: «Ձեր իրավունքները պաշտպանելու համար դիմե՞լ եք, արդյոք, ամերիկյան դատական համակարգին» հարցին Ք. Նաջարյանը պատասխանեց. «Մենք ամենասկզբից ջանացել ենք Հայաստանի դատաիրավական համակարգի շրջանակներում պահել այս գործը: Հուսով ենք, որ մեզ չեն ստիպի հակառակն անել»:

ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

www.hetq.am

ԳԻՏԱՓՈՐՁԵՐ

Հիպոկրատի «երդվյալ» թուրք զավակները

Ցափազանց մեծ է եղել ինչպես հայ բժիշկների, այնպես էլ բժիշկ դասախոսների մատուցած ծառայությունն Օսմանյան կայսրության բժշկագիտության վերելքին:

Առաջին համաշխարհային պատերազմի բռնկվելու պահից հայ բժիշկները, հավատարիմ տված երդմանը, ծառայեցին զինվորական հիվանդանոցներում գործող զորամասերում: Նրանցից շատերն ընկան պատերազմի դաշտում, մի մասը թուրք զինվորներին բուժելիս վարակվեց տիֆով, իսկ մնացածի վարձը եղավ այն, որ նահատակվեցին ամենաեղերական պայմաններում, երբ անսահման բարեխղճորեն էին կատարել իրենց պարտքը:

1919 թ. Պոլսի հայ բժշկական միությունը, որի նախագահն էր բազմավաստակ բժիշկ, բանաստեղծ Վահրամ Թորգոմյանը, լույս ընծայեց ֆրանսերեն մի գրքույկ՝ «Մեծ եղեռնի նահատակ հայ բժիշկների եւ ջարդարար թուրք երդմնադրուժ արվեստակիցների մասին», որտեղ նշվում էր. «Կայսերական բժշկական վարժարանի առաջին դասախոսներն էին հայ եւ հույն բժիշկները, որոնք կրթություն էին ստացել եվրոպական բժշկական համալսարաններում»: Համաձայն հայ բժշկական միության պատրաստած վիճակագրության, սպանված են. բժիշկներ՝ 64, թուրքական բանակում եւ հիվանդանոցում տիֆով վարակված ու մեռած՝ 52, ատամնաբույժներ՝ սպանված կամ տիֆով վարակված՝ 14, բժիշկ ուսանողներ՝ 15, դեղագործներ՝ նահատակված կամ տիֆով վարակված՝ 78: Ընդամենը՝ 218»:

Թուրք բժիշկներից շատերը մասնակից եղան եւ իրենց ձեռքերը լվացին հայ գործընկերների արյունով: Հայկական գլխավոր ջարդերի կազմակերպիչներն էին իթթիհատի ջարդարարական ծրագիրն իրագործող հետեւյալ երդմնադրուժ բժիշկները՝ Նազիմը, Բեհաեդդին Շաքիրը, Ռեշիտ բեյը, Համիտ Սուադը, Թեւֆիք Սալիմը, Մեհմեթ Ռեֆիկ, Սելեյման Նոման փաշան:

Սակայն վերոհիշյալ տեղեկագիրն ամբողջական չէր, այն պարզապես նահատակ հայ բժիշկների ցանկն էր: 1940 թ. Թուրքիայում Ա. Ն. Մեջուրյանը հրատարակեց «Հայ եւ ծագումով հայ բժիշկները» վերնագրով գիրքը, որի 1950 թ. երկրորդ հրատարակությունը լույս, երկար տարիների քրտնաջան աշխատանքի հետեւանք էր, միակն իր տեսակի մեջ, որը գալիս էր լրացնելու պակասը հայ բժշկության բնագավառում: 1957 թ. Բոսֆորում բժիշկ Գասպար Մկրտիչ Կարոյանը հրատարակում է «Մեծ եղեռնի նահատակ հայ բժիշկները» վերնագրով գիրքը, որտեղ տրված են ոչ միայն բժիշկների անվանացանկը, այլեւ նրանց կենսագրությունը, գործունեությունը, ճակատագիրը, եղերական մահը:

Դարեր ի վեր բժշկական գիտաժողովներում խստիվ դրված է այն հարցը, որ մարդկանց վրա գիտափորձեր կատարելն արգելվում է: Սակայն դա չէր վերաբերում թուրք, Մյունխենի բժշկական համալսարանում կրթություն ստացած կայսերական բժշկական վարժարանի պրոֆեսոր Համիտ Սուատին եւ նույն վարժարանի պրոֆեսոր Թեւֆիք Սալիմին: Նրանք հազարավոր հայ զինվորների ներարկում էին գիտական հաստատում չգտած տիֆի դեմ պատրաստված շիճուկը, որով հազարավոր հայեր մահվան դատապարտվեցին: Երզնկայում ապաստանած հազարավոր հայերի հետ վարվում էին այնպես, ինչպես փորձակենդանիների հետ: Նրանց ուժով նետում էին Երզնկայի հիվանդանոցը եւ «գիտական» փորձերի ենթարկում: Այդ մասին վկայություն է տվել վիրաբույժ Հայադար Ջեմալը: 1918 թ. դեկտեմբերի 23-ին բաց նամակ է ուղարկել ներքին գործոց նախարարություն: Վերջինս որպես բժիշկ աշխատել է նույն հիվանդանոցում եւ մասնակցել այդ գիտափորձերին:

Կայսերական վարժարանի պրոֆեսոր Սուլեյման Նոման փաշան, որն իթթիհատի կարկառուն դեմքերից էր, անբաժան մտերիմը էնվեր փաշայի՝ առողջապահության հարցերով քննիչ էր թուրքական բանակում, հարյուրավոր հայերի ողբերգական նահատակման պատճառ է դարձել: Նա հովանավորել է ջարդարար թուրք բժիշկների, որոնցից շատերն աստիճանի բարձրացում են ստացել ի գնահատություն իրենց գործած վայրագությունների: Հայ բժիշկների արյամբ են իրենց ձեռքերը ներկել թուրք բժիշկներ, Տրապիզոնի առողջապահության նախագահ Ալի Սայիբը, Երզնկայի զինվորական հիվանդանոցի բժիշկ Շեւքեթը, Ֆերիդունը, Համդի Սուլեյմանը, Ֆայիքը, Զիան, Հասա Ֆուադը եւ ուրիշներ:

ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Մեջբերումներ

Պատմության եւ իրականության դասեր

Հայության արդար դատի հաղթանակն այսօր արդեն ոչ մի հայի մոռ կասկած չի առաջացնում: Խնդիրը ժամանակի եւ այդ ընթացքում քարոզչական աշխատանքի ու պետական, ժողովրդական դիվանագիտության հնարավորությունների արդյունավետ օգտագործման մեջ է: Միաժամանակ, կարեւոր է ժամանակակից պայմաններում ցեղասպանության կանխարգելմանն ուղղված քայլերի իրականացման գիտակցումը: Մինչ արդարացիորեն զուգահեռներ են անցկացվում 20-րդ եւ 21-րդ դարասկզբների իրադարձությունների միջեւ, անթույլատրելի է սահմանափակվել միայն արտերկրում (Գուրգեն Մարգարյանի սպանությունը, այլ պակաս աղմկոտ սպանություններ ազգային պատկանելության պատճառով) կամ արտերկրի ուժերի դդմամբ Հայաստանում հրահրվող հայտնի եւ անհետեւյալ եղեռնագործություններով: Հայությանը սպառնացող վտանգների կանխարգելումը անհետաձգելի հրամայականով ենթադրում է նաեւ այսօր Հայաստանում տեղի ունեցող եւ ողջ հայությանն առնչվող վտանգավոր միտումների վերլուծություն: Դրանց միայն համառոտ անդրադարձը կարող է ազգային լուրջ անհանգստություն առաջացնել:

Մարդկության առաջադեմ ուսմունքը՝ քրիստոնեությունը, որը դարերով դավանել, հավատարմորեն պաշտպանել եւ հանուն որի վճարել են միլիոնավոր մարդկանց կյանքով, այսօր, ազատ եւ անկախ պետականության օրոք, լուրջ սպառնալիքներ է դիմագրավում հենց Հայաստանում: Հայ առաքելական եկեղեցու դիրքերի թուլացում կարելի է արձանագրել աղանդների զգալի աճխուժացումը, հանրային կյանքում սահմանադրական անկախ կարգավիճակով անգամ քրիստոնյաների ընդհանրական խնդիրների ու ցավերի նկատմամբ անհաղորդ կեցվածքը, Աստծո պատվիրանների ուրացումը ձեւաքաղաքացիորեն քրիստոնյա կոչվող իշխանիկների կողմից: Մի ձեռքով խաչակնքում, մյուսով մտնում են ժողովրդի եւ պետության գրպանը, նույն ձեռքով, որ դրվում է սուրբ Ավետարանի վրա՝ երդվելու, անարգվում են մյուս պատվիրանները... Հայ մանուկներից շատերն այսօր մկրտվում են օսար կրոնով: Հասուն մարդկանց հավատափոխ են անում արտերկրի գործակալները:

Արդյո՞ք հավատափոխության չէին ձգտում եղեռնագործները 1915-ին եւ դրանից էլ շատ առաջ:

Ո՞ւմ հայտնի չեն հայ ավանդապաշտ կանանց հերոսական օրինակները՝ օտարի տիրոջ ոտնձգություններից զերծ մնալու եւ ինքնասպան լինելով փրկելու հայ կնոջ բարոյական նկարագիրը: ...Հանրապետությունում կան բնակավայրեր, ուր դեռատի աղջիկների ծնողները կոիվ են տալիս արտերկրում մարմնավաճառության գործուղելու ցուցակներում նրանց ներառելու համար: Մարմնավաճառության փորձերը եզակի չեն այլեւս որոշ հայ տղամարդկանց մոտ: Ավելին՝ հայերի մարմնավաճառությունն օտարներին տեղի է ունենում ոչ միայն արտերկրում՝ քողարկված, այլեւ մեր հայրենիքում, հարեւանների եւ բարեկամների իմացությամբ:

Մի՞թե սա չէր ենիչերիների վաղեմի երազանքը:

Անկախության հռչակումից հետո սեփական բնօրրանում զարթնած երազած հայության համար ոչ թե ավելացան, այլ գնալով կրճատվեցին արժանավայել կենսակերպով ապրելու տարրական պայմանները: Սոցիալական, տնտեսական շինծու դժվարությունների, ավելի ճիշտ՝ թայֆաների կողմից հրահրված համատարած կողոպուտի, ապօրինությունների, քաղաքական եւ ոչ քաղաքական՝ սովորական երեւույթ դարձած սպանությունների, վախի ու սարսափի մթնոլորտում ուրախության արցունքները վերածվեցին կորստի ու հրաժեշտի արցունքների: Իրենց երկրից, հայրենիքից վտարանդի դարձան միլիոնավոր հայեր: Եվ թող զուր ջանքեր չգործադրեն համապատասխան մարմինները տնտեսագիտական եւ վիճակագրական անընդունելի մեթոդաբանությամբ գոյություն չունեցող ներգաղթի տվյալներ իշխանություններին ներկայացնելու համար: Անկախության 15 տարիների ընթացքում 1,5 միլիոնից ավելի հայության հեռացում հանրապետությունից: Ու թող նաեւ փորձեն գուշակել, թե արտագաղթածներից եւ նրանց սերունդներից քանի հոգու կհաջողվի լիարժեք հայ մնալ օտարության մեջ: **Հայաստանն առանց այդ հայերի: Նման չէ՞ արդյոք տեղի ունեցածը անցյալ դարասկզբին երիտթուրքերի հայտնի ծրագրին:**

Արտագաղթը զանգվածային է: Արտագաղթում են գյուղերից՝ լեռնային եւ սահմանամերձ: Ամայանում են բնակավայրեր, որոնք իսկապես սահմանապահ կարելի է անվանել, հետո՝ խոսում երկրի պաշտպանունակության մասին: Նրանք, ում չի հաջողվում գաղթել արտերկիր, գաղթում են գյուղից քաղաք եւ արդյունքում ստացվում է գերբնակեցված մայրաքաղաք եւ հարյուրավոր լքված բնակավայրեր: Իսկ ավելի հստակ՝ մոտ 300 լքված բնակավայրեր, ուր 750.000 հեկտար դուրս է եկել գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքներից: Եվ այս ամենը սակավահող հանրապետությունում, ուր ընդհանուր տարածքի մեկ երրորդից ավելին լեռնային ռելիեֆի, բնական այլ պայմանների բերումով պիտանի չէ գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար: Իսկ այսօր պետությունը ծրագրել է բնակավայրերի խոշորացման նոր ծրագիր, որը ոչ միայն ունակ չէ վերաբնակեցնել լքված տարածքները, այլեւ կարող է նոր գյուղեր վտանգել ամայացման:

Եվ եթե Արցախի հայաթափումը հնարավոր եղավ կանխել մահապարտ կամավորների արյամբ, ապա ի՞նչ գին պետք է վճարել հայի կողմից հալածվածների հայաթափումը երկրից կասեցնելու համար:

Իսկ հիմա այն մարդկանց մասին, ով, այնուամենայնիվ, մնաց, գոյատեւեց: Ի՞նչ արեցին հայաստանցու հետ: Մեծ մասն իրեն տխուր է զգում սեփական տանը: Եվ ոչ միայն այն տանը, որին վիճակ են նեսել Հյուսիսային պողոտա նորօրյա կողոպուտի ծրագրին քաղաքակիրթ բնույթ հաղորդելով: Իսկ երբեմն էլ առանց երկար-բարակ արդարացումների, բռնի ուժով, ծեծելով դուրս են վռնդում տնակների օրինական տերերին: Անգամ ոչ միայն այն այգում՝ Դալմայի այգում, ուր տարիներ շարունակ բարիք են ստեղծել ու հիմա պետք է հրաժեշտ տան՝ ի շահ իշխանիկ-որկրամոլների: Վստահ եմ, չկա մեկը, որն իրեն պաշտպանված զգա Հայաստանում: Մեկը, որ երաշխիք ունենա, որ նույն բախտին չեն արժանացնի եւ կարճ ժամանակ տալով, չեն վռնդի պարենական հողերից՝ մի նոր քաղաքաշինական գլուխգործոցի պատրվակով:

Այս անգամ ո՞ւմ մեղադրել, երբ հայն է հալածում հային: Հայ, որ օտարից դաժան ու վտանգավոր է, որովհետեւ օտար չէ՝ հայ է: Չէ, իրականում հայ էլ չէ, հայանման է, հայերեն է խոսում ընդամենը...

Այսքանից հետո նայենք մեր դեմքերին ու տարբերություն փորձենք նշմարել ջարդից մազապուրծ եղածների հոգեվիճակից: Ո՞ւր են հպարտության զգացումը, վստահ կեցվածքն ու ժպտացող դեմքերը: Տիրապետող է նրանց վախը, սարսափն ամբողջ Հայաստանի պետության ունեցած վերաբերմունքը: Բազմիցս նշվել է, որ բնական այլ ռեսուրսներով հարուստ մեր հարեւանները տասնապատիկ եւ ավելի շատ գումարներ են ծախսում գիտության զարգացման վրա: Ու եթե նրանց համար գոյություն ունեն սեփական տնտեսությունների զարգացման այլ հնարավոր եւ կայացած բնագավառներ, ապա մեր պարագայում երկրի մտավոր կարողությունն առայժմ միակ եւ բացարձակ առավելությունը կարելի է համարել: Ավելին, բավարար պայմաններ չեն ստեղծվում ոչ միայն զարգացման, այլեւ ընդամենը գիտության պարզ վերարտադրության համար: Ուղեղների արտահոսքի եւ գիտնականների զգալի մասի վերամասնագիտացման, նրանցից շատերի կյանքից հեռանալու արդյունքում հայրենի գիտության մի շարք ենթաճյուղեր այլեւս դարձել են պատմություն, քանզի ժամանակին չի ապահովել սերնդափոխության կարեւորագույն խնդիրը: Մյուս ուղղություններն այսօր կանգնած են ոչնչացման եզրին: Երիտասարդների շրջանում այսօր անհնար է հետաքրքրություն առաջացնել գիտությամբ զբաղվելու, կարեւորագույն գիտական հետազոտությունների շարունակականությունը ապահովելու հարցում: Ազգային էլիտար խավի մասին կամ չի խոսվում կամ կարելի է խոսել խիստ վերապահումով: Մտավորականության մի սվար հատվածի փորձել են քաղաքականացնել, իսկ մյուսները սարսափի եւ հոգեւոր հակասական ապրումների մեջ են: Գոյացել է համարձակ խոսքի, ընբոստ կեցվածքի, անաչառ գնահատականի, ազգանվեր լուրջ նախաձեռնությունների ակնհայտ պակաս:

Այն չէ՞ արդյունքը, ինչի համար անմեղ զոհ դարձավ հայ մտավորականության ընտրանին 90 տարի առաջ...

Գույներն ամենեւին էլ խտացված չեն: Սա է մեզ շրջապատող իրականությունը: Տարբերությունն այն է, որ ոմանք անաչառորեն ընդունում են փաստերը, ոմանք՝ խուսափում դրանից:

Այնուամենայնիվ, վերը նշվածի համար սխալ կլիներ, նաեւ միամտություն՝ մեղադրանքի հարվածն ուղղել մեկ կամ մի քանիսի հասցեին: Հասցեատերն, ըստ իս, առավել կործանարար Անտարբերությունն ու Հանդուրժողականությունն է:

ԹԱԹՈՒԼ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Պրոֆեսոր, ՀՀ ԱԺ պատգամավոր

Համաշիրությունները պատրաստվում են տեղական ինքնակառավարման ընտրություններին

Տեղական ինքնակառավարման ընտրությունները, որ իրենց տեխնոլոգիաներով ավելի բարբարոս են, քան սովորական ընտրակեղծիքները նախագահական ու խորհրդարանական ընտրություններում, շատ շուտով քաղաքական նոր եղանակներ կստեղծեն:

Կախված ելքից ու ընթացքից, դրանք գուցե եւ արմատական նոր վերադասավորումների պատճառ դառնան: Սակայն այս անգամ խիստ բարդ է լինելու խախտումների ավանդական հնարքների կիրառումը, քանի որ դարաբաղյան հարցով սրված իրավիճակում Եվրոպան 4 աչքով հետեւելու է նաեւ այս ընտրությունների ընթացքին:

Այնպես որ, կեղծարարությունների հեղինակներին ածպարարական մեծ ճկունություն է հարկավոր լինելու, որին հարկադրված են այսօրվանից նախապատրաստվել:

2 շաբաթ առաջ Ավանի համաշիրություններից մեկը տեղեկանքծանուցագիր է ուղարկել համաշիրության շենքերի բնակիչներին: Դրանցում սեւով սպիտակի վրա առ բնակիչները սպառնալիք է հղվում, որ եթե նրանք կարճ ժամանակում չվճարեն նախորդ տարիներին կուտակված սպասարկման պարտքերը, հարկադրված կլինեն դատական կարգով կորզել:

Խոսքը 60-100 հազարի հասնող գումարների մասին է: Եվ եթե այն հաշվարկում ես թեկուզ մեկ շենքի կտրվածքով, բավական պատկառելի թվեր են ստացվում:

Զարմացած ու վրդովված բնակիչների խնդրանքով դիմեցինք երկար տարիներ համայնքային զարգացման խնդիրներով զբաղվող փորձագետ Սոս Գիմիշյանին: «Համաշիրությունը սպասարկման վարձ պահանջելու իրավասություն չունի: Նա կարող է միայն անդամավճար պահանջել, որի չափերը ճշտվում են համաշիրության ընդհանուր ժողովում: Նման պահանջ ներկայացնելու համար բնակիչներն իրենք կարող են դատի տալ համաշիրությանը»:

Ոչ ոքի գաղտնիք չէ, որ արդեն 7-8 տարի դրսի աշխարհից մեխանիկորեն Հայաստան ներմուծված համաշիրություններն այդպես էլ չարդարացրին իրենց: Նրանց անճարակության եւ բնակիչների անվճարունակության պատճառով Երեւանի բազմաբնակարաններն ասիճանական քայքայումների ծանր ընթացքի մեջ են, իսկ դրանց մի զգալի մասը ավելացնում է վթարայնության տարբեր մակարդակները:

Վերելակների, դռների ու պատուհանների նորոգումների, ընթացիկ տարրական նորոգումների խնդիրներ անգամ չեն լուծվում:

Բացի այդ, համաշիրությունը, եթե տարին գոնե մեկ անգամ ժողով չի գումարում, ըստ օրենքի ու կանոնադրության, լուծարված է համարվում: Այս խնդիրները դեռ պիտի ճշտել, եւ գուցե համաշիրությունն ինքը հարկադրված լինի պատասխան տալ՝ բնակիչներին պատճառած ավելորդ հուզումների համար:

Այնուամենայնիվ, ինչու է համաշիրությունը դիմել այս արտառոց քայլին:

Մեծ երեւակայություն պետք չէ գլխի ընկնելու, որ «հայնագործության» արմատները առաջիկա տեղական ընտրություններում են: Մեծ գումարներ են պետք լինելու եւ հարկ է նախապատրաստվել այսօրվանից:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բարեփոխումներ

Երկքաղաքացիության եւ հարակից հարցերի շուրջը

Երկքաղաքացիության հարցը մեր իրականության մեջ պարբերաբար քննարկվում է սկսած այն օրվանից, երբ, անտեսելով հայ ժողովրդի աշխարհասփյուռ լինելու իրողությունը, ժամանակի քաղաքական ղեկավարները, որոնց գաղափարական հենքը կազմում է «ազգային միասնությունը ֆիկցիա է» սկզբունքը, սահմանադրության 14-րդ հոդվածի հասուկ պարբերությամբ ամրագրեցին այն բացառող դրույթ:

Դրանով անվստահության եւ օտարացման խոր անջրպետ փորվեց մեր ժողովրդի հատվածների միջեւ:

Այսօր սահմանադրական բարեփոխումների տարբերակների քննարկման համատեքստում հնարավորություն ունենք անդրադառնալու, իմ կարծիքով, մեր երկրի առաջընթացի համար չափազանց կարեւորություն ունեցող հարցին, որը սերտորեն առնչվում է ինչպես երկրի հեռահար-ռազմավարական եւ ազգային անվտանգության խնդիրներին, այնպես էլ քաղաքական-մարտավարական առաջնահերթություններին:

Այդ տեսանկյունից դիտարկենք դրանցից մի քանիսը:

Առաջին: Սկսենք Արցախի հիմնախնդրից: Մեկ անգամ եւս արձանագրենք, որ տխրահռչակ Աթինսոնի փարիսեցիական հորդորներից ավելի քան 16 տարի առաջ, միջազգային իրավունքի ոգու եւ տառի պահանջների խստիվ համապատասխանությամբ Արցախն ինքնորոշվել է, հանրաքվեով վավերացրել է այն՝ ստեղծելով անկախ պետականություն, իսկ այնուհետեւ պարտադրված դաժան պատերազմում հաղթանակ տանելով՝ բազմաթիվ զոհերի արյամբ ամրագրել է այդ իրողությունը: Նահանջի ամբողջ պաշարը սպառված է, եւ Արցախն այլեւս չի կարող Սումգայիթ իրագործելու ընդունակ Ադրբեջանի հետ միեւնույն պետական-քաղաքական տանիքի տակ լինել:

Սրան ասիճանաբար ընտելանում է համաշխարհային հասարակայնությունը: Կարծես թե ընտելանում են նաեւ գերտերությունները: Սակայն նրանց հիմքը շա՛տ զգայուն է նավթի բուրմունքի նկատմամբ: Բացի այդ, այս աշխարհի ուժեղները հաճախ առաջնորդվում են բազմակի ստանդարտներով, որոնք կաղ չեն ունենում բարոյականության եւ արդարության հետ: Օրինակները բազմաթիվ են: Եվ այնպես կարող է պատահել, որ Արցախի ու Հայաստանի վրա քաղաքական, տնտեսական կամ ավելի ներգործուն ճնշումներ գործադրվեն՝ Արցախը բռնի ուժով ադրբեջանական պետականության շրջանակի մեջ մղելու համար:

Նման հնարավոր զարգացումների մենք պե՞տք է պատրաստ լինենք: Իհարկե: Եվ եթե գործողությունները մեզ համար այդպիսի անբարենպաստ ընթացք ստանան, Հայաստանն ինչ իրավական հիմքեր կունենա Արցախին զորավիգ կանգնելու համար: Արցախցիների հայ լինելը դրա համար բավարար չէ: Մինչդեռ եթե նրանք ԼՂՀ-ի քաղաքացիությանը զուգահեռ Հայաստանի քաղաքացիություն եւս ունենան, ապա Հայաստանը լրացուցիչ շոշափելի իրավական հիմքեր կստանա արցախցիների՝ որպես իր քաղաքացիների շահերի պաշտպանությունը հոգալու համար:

Երկրորդ: Դիտարկենք Ցավախքի հիմնախնդիրը: Նշենք, որ իր երկար ու ձիգ պատմության ընթացքում Հայաստանը միշտ էլ վարել է բարիդրացիական, ավելին՝ եղբայրական հարաբերություններ իր հավատակից հյուսիսային հարեւանի՝ Վրաստանի նկատմամբ: Այսօր էլ ակնհայտ է դրանում մեր եւ շահագրգռվածությունը, եւ պատրաստակամությունը: Եվ ոչ մի կապ չունի ստեղ-ստեղ հայտնվող կեղծ մարգարեների հորդորների հետ: Դա մեր ժողովրդի բնույթի եւ առողջ աշխարհընկալման դրսեւորումն է: Հարկավոր է միայն, որ ջավախքցին հանգիստ ապրի իր հողի վրա՝ չենթարկվելով մշակութային, տնտեսական կամ ազգայնական ինչ-ինչ ճնշումների: Հարկավոր է նաեւ բացառել վարչաձեւարարական ամպարարություններով կամ թուրք-մեսխեթցիների խրախուսանքով երկրամասի ազգագրական պատկերի խաթարումը վրացական պետականության շրջանակներում, ինչով զբաղված էին Վրաստանի նախորդ իշխանավորները՝ մանավանդ Գամսախուրդիայի պաշտոնավարման տարիներին: Եվ հարկավոր է որդեգրել առաջացող խնդիրները երկկողմանիորեն փոխադարձ հարգանքի սկզբունքով լուծելու գործելակերպը: Սա բխում է մեր ժողովուրդների արմատական շահերից:

Բայց այստեղ էլ պետք է պատրաստ լինել վաթարագույնին: Եթե վրաց-թուրքական մերձեցումն անցանկալի ուղղվածություն ձեռք բերի, եթե Բաքու-Ջեյհան նավթամուղի եւ Կարս-Թբիլիսի երկաթուղու ծրագրերն օգտագործելով Թուրքիան ձգտի ավելի սաստկացնել Հայաստանի շրջափակումն ու մեկուսացումը, տկարացնել Ցավախքն ու դարձյալ հրապարակ նետել թուրք-մեսխեթցիների մեռելածին հարցը՝ փորձելով ավարտին հասցնել Հայաստանն ամբողջությամբ թուրքածին զանգվածով գոտեւորելու իր հեռագնա մտադրությունը, մենք, ինչ է, անտարբեր դիտորդի դե՞ր պետք է ստանձնենք, թե՞ սատար կանգնենք ջավախահայությանը, որին բաժին է հասել Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող ամենաադեկվատ օդանցքի պահպանումը: Կարծում եմ, երկրորդը: Բայց այդ դեպքում մեզնից կարող են պահանջել չխառնվել ուրիշի ներքին գործերին: Սակայն եթե ջավախահայությունը վրացական քաղաքացիությանը զուգահեռ հայկական քաղաքացիություն եւս ձեռք բերի, այդ դեպքում Հայաստանն ավելի որոշակի իրավական հիմքեր կստանա զբաղվելու իր քաղաքացիությունն ունեցող մարդկանց ճակատագրերով:

Երրորդ: Անդրադառնանք Հայաստանի քաղաքական առաջնահերթություններից մեկին եւս՝ ցեղասպանության հարցին: Բայց եկեք պարզենք, թե այդ ո՞ր իրավունքով է Հայաստանին այդ ասիճանի հուզում նշված խնդիրը: Միայն նրանո՞վ, որ խոսքը վերաբերում է հայերի դեմ իրագործված բարբարոսություններին: Ներեցեք, բայց Հայաստանը միայն հայերի հայրենիքը չէ, այստեղ ապրում են բազմաթիվ ռուսներ, եզդիներ, ասորիներ, հույներ եւ այլն: Եվ դա մեզ իրավունք չի տալիս զբաղվելու այդ ժողովուրդների շահերի պաշտպանությամբ: Սակայն եթե մենք ցանկանում ենք ավելի ամուր իրավական հիմքեր ունենալ ցեղասպանության հարցը մինչ հանգուցալուծում հասցնելու եւ Մեծ եղեռնի զոհերի շահերը պաշտպանելու համար, ապա անհապաղ հնարավորություն պետք է ընձեռել կոտորածների եւ վերապրածներին եւ նրանց հետնորդներին՝ դառնալու մեր լիիրավ հայրենակիցները, այսինքն՝ հայկական քաղաքացիություն ստանալ:

Չորրորդ: Գաղտնիք չէ, որ անցյալ դարի 80-ականների վերջերից լայն թափ առած եւ ներկայումս էլ շարունակվող արտագաղթի արդյունքում մեր շատ հայրենակիցներ հայտնվեցին Հայաստանից դուրս՝ արտասահմանյան բազմաթիվ երկրներում ստեղծելով կեցության եւ կայք հաստատելու տեսակետից խայտաբղետ համայնքներ ու հոծ խմբեր: Ջեւավորվել է, պայմանականորեն ասած, նոր սփյուռք: Մեր պատմական հոլովույթի կտրվածքով նայելու տեսակետից արտագաղթի այս վերջին բռնկումն առանձնահատուկ է նրանով, որ կատարվում է ավելի քան վեցդարյա կորուստից հետո անկախ պետականություն վերստեղծելու գործընթացի սկզբնավորման տարիներին: Եվ եթե ամեն մի առանձին դեպքի համար հնարավոր է հասկանալի եւ ընդունելի պատճառներ գտնել արտագաղթն արդարացնելու համար, ապա ամբողջության մեջ վերցրած անհասկանալի եւ անընդունելի է, որ անկախության մեծ տենչով համակված ժողովուրդը, դրա հնարավորությունը ստանալուց հետո, կարծես թե չի զգում նրա առաջնահերթությունն ու անանցանելի արժեքը: Բայց փորձենք երեւույթին նայել այդ դիտանկյունից: Վերջին հաշվով վկա ենք բոլորս, եղել է հուսախաբված, լքված ու անտարբերության մատնված ժողովուրդ, որն, անհեթեթ համարելով «բարեկամներից պարտք անելով» ապրելու գաղափարը, իր գլխի ճարը տեսել է ինչպես կարողացել է: Եվ եթե այդպես չվարվեր՝ Հայաստանի վիճակն այսօր շա՛տ ավելի ծանր կլիներ:

Նորօրյա արտագաղթածների մի մասը, հնարավոր է, հայրենիքը լքել է մեկընդմիշտ: Սակայն կասկածից վեր է, որ մեծամասնությունն արտասահմանում տնտեսական բարեկեցության հասնելուց, ֆինանսական շոշափելի կուտակումներ ապահովելուց հետո մեզ մոտ ապրելակերպի բարելավման զգալի առաջընթաց նկատվելուց հետո կձգտի վերադառնալ: Բայց այդ գործընթացը կարող է երկար տեւել, եւ դրա ընթացքում շատերը սիրված կլինեն կեցության հարցեր լուծելու համար օտարերկրյա քաղաքացիություն ընդունել: Հիմա ի՞նչ է տեղի ունենում. հայկական պետականությունը, որը ժամանակին չի կարողացել ապահովել իր այդ քաղաքացիների ապրելակերպի ամենատարրական հարցերը, իրավունք ունի՞ հրաժարվելու նրանցից եւ վանելու նրանց դեպի ուծացման մսաղաց: Իհարկե՝ ոչ: Ուրեմն պետք է երկքաղաքացիություն ստանալու հնարավորություն ստեղծել:

Հինգերորդ: Մենք անընդհատ շեփորահարում ենք, թե Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է. մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ ազգ, մեկ մշակույթ, համահայկական նավատորդյան խաղեր եւ այլն, եւ այլն: Գեղեցիկ է, լավ է, անհրաժեշտ է: Բայց իրավական տեսակետից ոչինչ չենք անում, որպեսզի սփյուռքահայը՝ մեր հոգսերին աջակիցն ու պայքարին մասնակիցը, իր գոյությունը հիմնականում մեզնով պայմանավորող մեր այդ թանկագին 3/4-ը մայր հայրենիքում իրեն զգա որպես լիարժեք հայ, այլ ոչ թե հայտնվի օտարերկրյա զբոսաշրջիկի կարգավիճակում: Հարցի լուծումը նույնն է՝ երկքաղաքացիության հնարավորության ապահովում:

Հավանաբար կասկած չի կարող լինել, որ եթե սփյուռքահայերը երկքաղաքացիության իրավունքով հայկական քաղաքացիություն եւս ունենան, հայրենիք այցելելու նրանց հոսքը զգալիորեն կավելանա, քանի որ հրավերների ձեւակերպումներն ու դրանց ժամանակային սահմանափակումները բոլոր դեպքերում կենցաղային-կազմակերպչական եւ առավել եւս բարոյահոգեբանական անհարմարություններ են ստեղծում՝ երկրի գանձարանը զրկելով հնարավոր շոշափելի ֆինանսական մուտքերից:

Ներկայիս Հայաստանի բնակչության թիվը հավանաբար 2,5-3 մլն է: Աշխարհում հայերի թիվը, որոշ հաշվարկներով, 10 միլիոնի սահմաններում է: Եթե նույնիսկ ընդունենք, որ երկքաղաքացիության իրավունք ապահովելուց հետո ոչ բոլոր սփյուռքահայերը կօգտվեն այդ հնարավորությունից, կասկածից վեր է, որ դրանց թիվը միլիոնների կհասնի: Եվ մենք կունենանք կրկնակի, եռակի բնակչությամբ Հայաստան, համահայկական Հայաստան, շատ ավելի մեծ հնարավորությունների երկիր: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ մեծ սփյուռք ունեցող շատ երկրներ՝ Իսրայելը, Հունաստանը, Լիբանանը, Թուրքիան, վաղուց արդեն երկքաղաքացիության օրենք են ընդունել եւ այսօր բարգավաճում են՝ որոշակիորեն նաեւ հենց երկքաղաքացիության շնորհիվ:

Այս ամենը՝ հանուն երկքաղաքացիության: Իսկ ի՞նչ է ասվում ընդդեմ:

Ուշադիր քննարկման դեպքում ակնհայտ է դառնում, որ բոլոր մտավախությունները կարելի է փարատել երկքաղաքացիությունը կանոնակարգող համակողմանիորեն մտածված ու ձեւակերպված օրենքի շնորհիվ:

Օրինակ: Որոշ ընդդիմախոսներ պնդում են, թե երկքաղաքացիությունը վտանգի տակ կդնի երկրի անվտանգությունը, քանի որ հնարավորություն կտա արական սեռի մեր երիտասարդությանը խուսափել պարտադիր զինծառայությունից: Հարց է առաջանում. իսկ արգելքը շա՞տ է նպաստում մեր բանակի համալրմանը: Չէ՞ որ ով զուտկ է եղել ազգային-բարոյական նկարագրից եւ հնարավորություն է ունեցել, վաղուց խուսափել է զինծառայությունից: Խուսափողներ միշտ էլ կլինեն: Արգելքը նրանց չի խանգարում: Մինչդեռ հարցը լուծվում է հասարակ կերպով. օրենքով զինակոչի տարիքի հայաստանաբնակ երիտասարդների համար սահմանված է, որ երկրորդ երկրի քաղաքացիություն կարելի է ձեռք բերել միայն հայկական բանակում ծառայելուց հետո:

Ինչ վերաբերում է զինակոչի տարիքի սփյուռքահայ երիտասարդությանը, նույն օրենքով կարելի է սահմանել, որ Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերելու համար հայկական բանակում ծառայելն անհրաժեշտ նախապայման է անկախ այն հանգամանքից, թե դիմորդն իր քաղաքացիության երկրի բանակում ծառայե՞լ է, թե՞ ոչ: Այսպես են վարվում, օրինակ, հույները: Գուցե կարելի է ավելի ճկուն մոտեցում ունենալ այն սփյուռքահայերի նկատմամբ, ովքեր օտարերկրյա բանակում զինծառայության ամբողջական ծրագրեր են անցել: Նրանց համար մեզ մոտ պարտադիր զինհավաքներ կարելի է կազմակերպել մեկ-երկու ամսով, որքան պետք է մեր բանակի զինտեխնիկային եւ այլ անհրաժեշտությունների ծանոթանալու համար: Իսկ չծառայածները, պարզ է, պարտադիր զինծառայության ամբողջական ծրագիր պետք է անցնեն մեզ մոտ: Կարծում եմ, շատ կլինեն այն սփյուռքահայ երիտասարդները, ովքեր պատիվ կհամարեն հայրենի բանակում ծառայելը: Այն բանակում, ուր տիրում է խստապահանջ կարգապահություն եւ միաժամանակ հոգատարություն, պարտադիր հավասարություն ու ազնվություն, եւ որտեղ հրամանատարը՝ բանիմաց ու գործավարժ, զինվորի արյունավետ ու անվտանգ ծառայության երաշխավորն է: Այսպես պետք է լինի: Այսպիսի բանակում ծառայելուց ո՞վ կխուսափի: Կարող են ուրիշ նպատակահարմար մոտեցումներ եւս լինել: Բոլոր դեպքերում՝ հնարավոր է գտնել այն լավագույն տարբերակները, որոնք կբացառեն մեր բանակի ներքին համալրման նվազեցման վտանգը եւ կապահովեն նորանոր Մոնթեների ներհոսքը:

Մյուս մտավախությունը: Արգելքի վերացումով լայնագրպան օտարերկրացիները կհեղեղեն երկիրն ու կտիրանան ամեն ինչին: Սա եւս փարատվում է հեշտությամբ. նույն օրենքով սահմանվում է, որ երկքաղաքացիության իրավունքից կարող են օգտվել օտարերկրյա քաղաքացիություն ունեցող այն անձինք, ովքեր ծագումով էթնիկ հայեր են: Դրանից հետո մեզ համար միեւնույն պետք է լինի, թե ով է տիրանում այս կամ այն հողակտորին, արտադրական կամ կենցաղային կառույցին՝ հայաստանաբնակ հա՞յը, թե՞ սփյուռքահայը: Առավել կարեւոր է, որ գործարքի արդյունքում ոչ մի ծառ չկտրվի եւ սիզամարգ չավերվի, չխաթարվի բնակավայրի ճարտարապետական տեսքը, առք ու վաճառքն անպայման կատարվի իրական ածուռդով, այլ ոչ թե, պտտվող լուրերի համաձայն, այսպանը՝ ձեւակերպման համար, այսպանն էլ՝ ինձ սկզբունքով: Եվ կարեւոր է, որպեսզի սեփականացված կառույցներն աշխատատեղեր դառնան եւ գործեն օրինական հարկային դաշտում:

Բացի այդ, 1995 թ. հուլիսի 5-ից արգելքը գործում է, բայց դա խանգարե՞ց, որ հույներին վաճառվի մի այնպիսի ռազմավարական ոլորտ, ինչպիսին է կարը: Խանգարե՞ց, որ ֆրանսիացիներին վաճառվի հայկական կոնյակի արտադրությունը, որով մենք կարող էինք այս հարցում աշխարհում երեւելի դիրք ունենալ: Այնպես որ, երկքաղաքացիության լինել-չլինելն այս ամենի հետ կապ չունի: Ընդհակառակը: Եթե արգելքը վերացվի, եւ Ազգային ժողովում կուտակված իմաստուն ու հեռատես ազգանվեր պատգամավորները, այդպես պետք է լինի, երկնեն կանոնակարգող օրենքը, գուցե հնարավոր լինի կարեւոր նշանակության որոշ ոլորտներ զերծ պահել կասկածելի առուվաճառքից: Նույն դատողությամբ հեշտությամբ կարելի է հերքել հակաճառողների մյուս բոլոր վերապահումները եւս:

Այս ամենից հետո մնում է հուսալ, որ Ազգային ժողովը հավանություն կտա սահմանադրական բարեփոխումների՝ երկքաղաքացիության արգելքը վերացնող տարբերակին:

ՎԱՀԵ ԱՔԱԲԵԿՅԱՆ
Քաղաքագիտության դոկտոր

Սահմանադրության բեռը ծուռն է դրված

Խոսքը վերաբերում է մեր հանրապետության սահմանադրությանը, որը ստեղծվել է 1995 թ.:

Երրորդ հանրապետության սահմանադրության հեղինակները, հասկորեն չպատկերացնելով նոր ստեղծված երկրի առաջ ծառացած խնդիրները եւ դրա լուծման առանձնահատկությունները, ժողովրդի պատմական անցյալը, նրա սովորությունները եւ վարժվածությանը երկրորդ հանրապետության օրենքներին, սար ու ձոր հեռու գտնվելով համակարգի սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման եղանակներից եւ հեռագա անելիքներից եւ որ կարեւորն է՝ հեռու լինելով օրինավորության նորմերից, ստեղծեցին մի այնպիսի սահմանադրություն, որի կիրառման արդյունքով ստեղծվեց կառավարչական բացարձակապես բացասական հասկանիքներով մի կոնգլոմերաս վարչակարգ: Հենց այդ վարչակարգի անհեռանկար քաղաքականության շնորհիվ կանգ առան բոլոր արտադրական ձեռնարկությունները, հարյուր հազարավոր մարդիկ դարձան գործազուրկ եւ դրա պատճառով էլ բռնեցին գաղթի ճամփան:

Նախ այդ սահմանադրությունը հավվի չէր առել նոր հասարակարգ ստեղծելու խնդիրները, եւ որպեսզի այն մոտեցվեր արեւմտյան մոդելներին, հիմնականում արտագրվել էր այդ երկրների սահմանադրություններից եւ փաստորեն հրամցվել էր մի կատարյալ «Գասպարյանի շարադրություն» եւ ինչպես ասվում է՝ «մի քանի խոսք էլ մեր կողմից» եւ դրվել էր այսպես կոչված համաժողովրդական հանրաքվեի, մի ժողովրդի հանրաքվեի, որ գաղափար անգամ չուներ ժողովրդավարական կանոններից եւ մարդու իրավունքներից առհասարակ:

Որո՞նք են այդ սահմանադրության ամենաարատավոր կողմերը: Նախ եւ առաջ անկախություն ստանալուց հետո առանց տատանվելու որդեգրվեց կապիտալիզմի ստեղծման ամենագռեհիկ տարբերակը, եւ որպեսզի այդ անվանումը չխրտնեցներ սոցիալիստական ուղուն վարժված հասարակությանը, նրան տրվեց ազատ շուկայական հարաբերությունների հասարակարգ գայթակղիչ եւ սիրաբաշող անվանումը: Դա, իհարկե, խնդրի արտաքին ձեւավորումն էր, որը պետք է բերվեր տիպիկ բուրժուական հասարակության ստեղծմանը: Իսկ Հայաստանի պայմաններում, հավվի չառնելով ժողովրդի հոգեբանությունը, արագ հարստանալու մոլուցքը եւ պարտականությունների կատարման պարտադրելիությունը, շատ շուտով ստեղծվեց բուրժուազիայի քառակուսին:

Սահմանադրության այս մասի դառը պտուղներն իրենց երկար սպասեցնել չտվեցին: Սեփականատերեր դարձան Խորհրդային Միության տարիներին թալանած միջոցներով հիմնականում գործարանների տնօրենները ու իրենց որդիները, նրանց կողմից հովանավորվող մաֆիական ավազակախումբը, որոնց գերակշռող մասը բոլորովին անտեղյակ էր արտադրության կազմակերպման տեխնոլոգիաների նորացման, շուկայափնտրության (մարկետինգ) եւ տնտեսվարման գործընթացներին: Եվ քանի որ սահմանադրությունը ամրագրել էր «...Սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում եւ տնօրինում է իրեն պատկանող գույքը...», արդա այդ ապօրինի սեփականատերն էլ (եւ քանի որ չկար աշխատանքային օրենսգիրք, թե ինչ նվազագույն աշխատավարձ պետք է վճարի գործատուն գործը կատարողին), սկսեց աշխատողի տենդագին շահագործումը եւ խստորեն բեւեռացվեց հասարակությունն ըստ եկամուտների: Աշխարհում ընդունված չափանիշներով բնակչության ավելի հարուստ 20 տոկոսի եւ ավելի աղքատ 20 տոկոսի եկամուտների հարաբերակցությունը երբ տարբերվում է 6-7 անգամ, այդ դեպքում սպառնալիք է ստեղծում երկրի սոցիալ-քաղաքական կայունությանը:

Մինչդեռ Հայաստանում սեփականաշնորհումից եւ համատարած գործազրկությունից հետո այս հարաբերակցությունն ըստ փորձագիտական գնահատումների 5-6 անգամ գերազանցում է թույլատրելի սահմանագիծը (այսինքն՝ 30-35 անգամ է):

Եվ այս բոլորի հետ դեռ սահմանադրությունն ամրագրում է «Հայաստանը... սոցիալական պետություն է» (Հոդված 1) եւ դեռ ավելին «...յուրաքանչյուր ոք ունի արդարացի եւ պետության կողմից սահմանված նվազագույնից ոչ ցածր... աշխատավարձի իրավունք» (Հոդված 29):

Հիմա գնալով էլ ավելի է խորանում բեւեռացումը ըստ եկամուտների: Հենց դա է պատճառը, որ առաջացել է օլիգարխների եւ էլիտարության կատեգորիան՝ ստեղծվում են էլիտար շենքեր, էլիտար վարժարաններ եւ նույնիսկ էլիտար ջուր, որի խմելու հնարավորություններն ունեն նյութական շատ հնարավորություններ ունեցող «էլիտարները»: Դպրոց են տանում ու բերում իրենց երեխաներին շքեղ մեքենաներով եւ թիկնապահների ուղեկցությամբ: Սա նույնիսկ չկա բուրժուական երկրներում: Ցավալի է եւ զավեշտական, երբ հիմա Հայաստանում պրոֆեսորի աշխատավարձը 2-3 անգամ ցածր է նույնիսկ բանկի դռնապանի աշխատավարձից, իսկ բարձրագույն դպրոցի լաբորանտական կազմի աշխատավարձն ընդամենը 14000 դրամ է:

Սահմանադրության երկրորդ եւ կոպտագույն սխալն այն էր, որ չհստակեցվեց հողի սեփականաշնորհման հարցը եւ առհասարակ չի ամրագրվում, թե ինչպես եւ ում է պատկանում հողը: Իսկ հողի սեփականաշնորհման թե որ երկրի փորձն էին ամրագրում գաղափարախոսության նորաթուխ պարագլուխները, հայտնի չէր, քանզի աշխարհում չկա այնպիսի երկիր, ուր ողջ օգտագործվող հողերը սեփականաշնորհված լինեն, եւ այն էլ Հայաստանի պայմաններում գյուղացուն թողնելով մեն-մենակ իր կտոր-կտոր հողերի հետ: Նույնիսկ մեր հարեւան Իրանի, որը երկու հազար տարվա մասնավոր սեփականատիրական երկիր է, գյուղատնտեսության շուրջ 63 տոկոսը կոոպերացված է: Այլ կերպ լինել չէր էլ կարող, որովհետեւ գյուղատնտեսության խոշոր ապրանքային արտադրության ստեղծման եւ երկրի պարենային ապահովվածության համար հնարավոր է միայն կոոպերատիվ տնտեսվարման շնորհիվ, զուգակցված թեկուզ մասնավոր հողօգտագործման հետ եւ այն էլ պետության խիստ վերահսկողության եւ օգնության պայմաններում:

Պատահական չէ, որ Ռուսաստանի Պետդուման երկար տարիներ քննարկում է հողի սեփականաշնորհման խնդիրը, չնայած այդ երկրում կան եւ ֆերմերային տնտեսություններ, եւ սեփականացված հողեր, բայց, այնուամենայնիվ, լայնամասշտաբ սեփականացման հարցը չի դրվում, որովհետեւ նրանք հստակ պատկերացնում են դրա չարագուշակ հետեւանքները: Իսկ մեզ մոտ արդեն մասսայական է դարձել, որ հողը սեփականացնելուց հետո թողնելով այն անմշակ ու անտեր՝ մեկնում են այլ երկրներ աշխատանքի, իսկ պատասխանատվություն գոյություն չունի: Այսօր ըստ հաղորդումների, Հայաստանի գյուղատնտեսության համար օգտագործելի հողերի մոտ 40 տոկոսը չի մշակվում:

Մենք պատահական չէ, որ անդրադառնում ենք արդյունաբերության եւ գյուղատնտեսության խնդիրներին, որովհետեւ անկախ երկրի ղեկավարման ձեւից (նախագահական, կիսանախագահական, պառլամենտական թե մեկ այլ հորինված ձեւից), երկրի կայունությունը կախված է հենց այս երկու գործոններից, որոնց մասին սահմանադրության մեջ բացի փքուն դեկլարատիվ արտահայտություններից ոչիչ բան չես գտնի: Իսկ այն, ինչ այնուամենայնիվ գրվել է սահմանադրության մեջ, ի սկզբանե հունցված է մաֆիական փիլիսոփայությամբ:

Զարմանալիորեն սահմանադրության մեջ ոչինչ չի ասվում զինվորական ծառայության պարտադրելիության մասին, միայն գրվել է մի լոզունգ. «...Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը» (կետ 47) եւ ուրիշ ոչինչ: Սահմանադրության մեջ ոչինչ չի ասվում հատկապես քաղաքացիների զինվորական ծառայության եւ հայրենիքի պաշտպանության մասին, չի ամրագրվում պարտադիր զինվորական ծառայությունը: Մեր կողքի երկրներում, մասնավորապես Իրանում, սահմանադրությունն ամրագրում է, որ ով չի ծառայել ազգային բանակում, նա չի կարող լինել քաղաքացի կամ զբաղեցնել պետական պաշտոն: Դեռ ավելին՝ եթե քաղաքացու որդին չի ծառայել ազգային բանակում, ապա նա նույնպես պետական որեւիցե մի պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի: Մինչդեռ Հայաստանում նախարարությունների բազմաթիվ աշխատողներ (արտաքին գործերի, կրթության եւ գիտության, քաղաքաշինության) բազմաթիվ աշխատակիցներ երբեւէ չեն ծառայել հայոց բանակում:

Հստակեցման կարիք է զգացվում սահմանադրության 28-րդ կետում, որտեղ նշվում է. «...Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները...»: Իրականում հիմա հակառակն է: Օտարերկրյա քաղաքացիները բնակարաններ եւ հողատարածքներ են գնում Հայաստանում, եւ հետզհետե այդ գործողություններն ընդլայնվում են:

Իսկ սա էլ երկքաղաքացիություն տալու չարագուշակ ազդակներից մեկն է, որն, ըստ իս, պետք է արգելվի, քանզի այն աղագայի համար խիստ վտանգավոր է Հայաստանի Հանրապետության կայունության համար:

ԺՈՐԱ ՄԻՐՋԱԲԵԿՅԱՆ
Պրոֆեսոր

Առաջարկում եմ

Սահմանադրությունը որպես պետության հիմնական օրենք, օժտված լինելով բարձրագույն իրավաբանական ուժով եւ սահմանելով երկրի քաղաքական, իրավական ու տնտեսական հիմունքները, անհրաժեշտաբար պետք է արտացոլի նաեւ ժողովրդի ազգային մտածողության, նիստուկացի եւ հոգեկերտվածքի հիմնական առանձնահատկությունները:

Կայացող պետությունների պարագայում այն, ամրագրելով արդեն առկա ընդունելի իրողությունները, միաժամանակ պետք է միտված լինի աղագային՝ նպաստելով ազգային հեռահար-ռազմավարական եւ մարտավարական նպատակների իրականացմանը:

Նրանում արտահայտված յուրաքանչյուր դրույթ, գաղափար, պետք է լինի հիմնավորված, պատճառաբանված, բյուրեղացած ու հստակ ձեւակերպված ե՛ւ բովանդակությամբ, ե՛ւ ձեւի առումով:

Սահմանադրությունը երկարաժամկետ փաստաթուղթ է: Բայց մենք ապրում ենք հարափոփոխ ժամանակներում եւ չնայած գործող հիմնական օրենքն անցած ժամանակահատվածում ծառայել է իր նպատակին, ներկայումս կարիք է զգում բարեփոխումների, որոնք պետք է ավելի արդիականացնեն այն՝ կայացող մեր պետականության եւ ընդհանրապես հայկական հավաքականության հետագա ամրապնդման համար:

Ահա, առաջնորդվելով նշված մոտեցումներով, ես Ազգային ժողովի համապատասխան հանձնախմբի ուշադրությանն եմ ներկայացնում հետեւյալ առաջարկությունները:

Ա. Թիվ 13 հոդվածի առաջին մասն այսպիսի տեսք ունի. «Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով...»: Կարծում եմ, Առաջին հանրապետության վարիչները, սահմանելով Հայաստանի պետական դրոշը, կարողացել են հասնել գույների բացառիկ ակնահաճո ներդաշնակ համադրության: Բայց ձեւակերպման անճշտություն կա. նարինջը Հայաստանի համար բնորոշ չէ: Մեզ համար առավել բնորոշ է ծիրանը եւ ծիրանագույնը, դալար արտերի ծիրանագույն ցոլքը: Առավել եւս, երբ, լուրջ հետազոտությունների համաձայն, Հայաստանը ծիրանի եւ ցորենի հայրենիքն է: Առավել եւս, որ ծիրանագույնը՝ ծիրանին հայ թագավորների արտոնյալ գույնն է եղել, պետականություն է խորհրդանշել: Բացի այդ, նարնջագույնը եւ ծիրանագույնը գրեթե նույն գույներն են՝ դեղինի ընտանիքի իրար շատ մոտ տարբերանգներ: Այնպես որ, իմ կարծիքով, ճիշտ կլինի նշված հոդվածի առաջին մասն այսպես ձեւակերպել. «Հայաստանի Հանրապետության պետական դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով եւ ամբողջական դրոշի երկարության ու լայնության չափերի երկուսը մեկի հարաբերությամբ...»:

Բ. Թիվ 14 հոդվածի երկրորդ մասով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար բացառվում է երկքաղաքացիություն ունենալու իրավունքը: Ձեւակերպումն այսպիսին է. «...Հայաստանի Հանրապետության քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի»: Իմ կարծիքով, սրանով անտեսվում է հայ ժողովրդի աշխարհասփյուռ լինելու իրողությունը եւ խոր անջրպետ է փորվում հայության հատվածների միջեւ: Արգելքն ուրիշ բացասական կողմեր եւս ունի:

Առաջարկում եմ վերացնել արգելքը, իսկ երկքաղաքացիություն տալու կարգը սահմանել հատուկ օրենքով, որը կկանոնակարգի դրա հետ կապված իրավաբանական, քաղաքական ու տնտեսական բոլոր ասպեկտների ամբողջական գամման:

Գ. Թիվ 32 հոդվածը նվիրված է ընտանիքին: Նրա առաջին մասն այսպիսի տեսք ունի. «...Ընտանիքը, մայրությունը եւ մանկությունը գտնվում են հասարակության ու պետության հովանավորության ու պաշտպանության ներքո...»:

Առաջարկում եմ սրանից հետո ավելացնել մեկ մաս եւս, որին կհետեւի հոդվածի մյուս մասը՝ նվիրված կնոջ եւ տղամարդու իրավահավասարությանը: Այսպես. «...Պետությունը եւ հասարակությունն ամեն կերպ նպաստում են ազգաբնակչության բնականոն աճին...»: Կարծում եմ, կոտորածներ ու ցեղասպանություն ապրած, ավերիչ երկրաշարժեր տեսած, Երկրորդ աշխարհամարտին շուրջ 350 հազար զոհ տված մեր երկիրը նաեւ սահմանադրությամբ ամրագրված չափազանց լուրջ ուշադրություն պետք է դարձնի թվաքանակի, այդ ահռելի կորուստների վերականգնման հարցին:

Դ. Թիվ 63 հոդվածի առաջին մասով սահմանվում է Ազգային ժողովի կազմը՝ 131 պատգամավոր: Հարց է առաջանում՝ 3-3,5 մլն բնակչություն ունեցող մեր երկրի համար մեծ չէ՞ արդյոք այս թիվը: Դիտարկենք ներկա խորհրդարանի կազմը եւ աշխատանքը: Նիստերի կիսադատարկ դահլիճ եւ քվորում ունենալու հիմնախնդիր:

Ազգային ժողովը գերհագեցած է օրինաստեղծ աշխատանքի համար նախադրյալներ չունեցող եւ մասնավոր բուռն գործունեությամբ ծանրաբեռնված պատգամավորներով, որոնց մի մասն՝ ի թիվս այդ ամենի, հասարակական պատասխանատու պարտականություններ եւս ունի: Այս ամենը համադրելու համար հիրավի գերմարդու որակներ են հարկավոր: Մյուս կողմից, հենց միայն խորհրդարանական պատգամավորի պարտականությունների բարեխիղճ կատարումը պետք է, որ աշխատաժամանակի, մտավոր էներգիայի եւ եռանդի հսկայական ներդրում պահանջի՝ բացառելով այլ գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը: Այդպես է. բաբաթը մեկ եռօրյա նիստեր հստակ սահմանված աշխատակարգով, լարված աշխատանք խորհրդարանական մշտական կամ ժամանակավոր հանձնախմբերում, պաշտոնական գործուղումներ եւ այլն: Այս ամենին չմասնակցել կամ կիսաս-պռաս մասնակցել չի կարելի, անհարմար է: Ժողովուրդը վստահության քվե է տվել: Նա իր աղքատիկ հնարավորություններից հսկայական (նվազագույն աշխատավարձի համեմատ) աշխատավարձ է սահմանել պատգամավորի համար (համենայն դեպս՝ համակերպվել է դրա հետ):

Ահա, այս դատողություններով ու չափորոշիչներով առաջնորդվելու դեպքում, գործավարժ (պրոֆեսիոնալ) խորհրդարան ունենալու դեպքում նրա աշխատանքը հստակ եւ հագեցած կազմակերպելու դեպքում, կարծում եմ, հնարավոր կլինի զգալիորեն կրճատել պատգամավորների թիվը:

Հետո, գաղտնիք չէ, որ խորհրդարանի «Արդարություն» եւ «Ազգային միաբանություն» խմբակցությունները՝ միասին 21 պատգամավոր, երկու տարի քաղաքական նկատառումներով բոյկոտում են Ազգային ժողովի աշխատանքները: Ես նպատակ չունեմ անդրադառնալու մեր ընդդիմադիրների ակցիայի օրինակելի լինել-չլինելու հարցին: Գուցե եւ դա պառլամենտական ընդունված հնարանք է՝ իրավիճակից դժգոհություն հայտնելու ընկալելի միջոց:

Այսպես թե այնպես, կարելի է փաստել, որ գործնականում 21 պատգամավոր երկու տարի դուրս է մնացել օրինաստեղծ աշխատանքից: Բայց դա նշանակո՞ւմ է արդյոք, որ մեր խորհրդարանի կազմը կարելի է կրճատել առնվազն... 21 պատգամավորով: Այս մասին գուցե արժե՞ մտածել:

ՀՐԱՉ ԱԹԱՐԵԿՅԱՆ
Ճարտարագետ-եռախագծող

Մշակութային եղեռնից փրկված ձեռագրերը

Երեւանի Մատենադարանում այսօր պահպանվող հազարավոր ձեռագրերի մի մասը Մեծ Եղեռնից փրկված տարբեր դարերի (10-17-րդ դդ) մագաղաթյա մատյաններ են: Ապրիլյան ոգեկոչումի այս օրերին երեկ Մատենադարանում բացված ցուցահանդեսը Եղեռնից փրկված մշակութային մեր սուրբ մասունքների ճակատագրերի մասին է պատմում, որ ներկայացրեց Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը:

1915 թ.-ին մեր պատմական հայրենիքում մեկուկես միլիոն հայեր զոհ գնացին թուրքական կառավարության ցեղասպան ոճրագործությանը, միլիոնավոր հայեր տարագրվեցին իրենց հինավուրց բնօրրանից: Մարդկային ահասարսուռ կորուստներից բացի մենք անվերադարձ կորցրեցինք նաեւ մեր դարավոր մշակույթի հարուստ ժառանգությունն ու ավանդույթները՝ մեր բնօրրանում թողնելով ճարտարապետական գեղարվեստական աշխարհիկ ու հոգեւոր կառույցներ, որոնք ավերվեցին, թալանվեցին կամ ոչնչացվեցին թուրքական բարբարոս ոճրագով: Մեր վանքերում ու եկեղեցիներում բնաջնջման ենթարկված հազարավոր ձեռագրերի որոշ մասը բարեբախտորեն փրկվեց, դրանք փրկեցին հասարակ հայ մարդիկ, գաղթականներ, հայ կամավորականներ՝ հաճախ իրենց կյանքը վտանգելու գնով: Ամենահայտնիներից են Մշո Ճառընտիրը՝ փրկված Մուշի Առաքելոց վանքից, որի՝ Մատենադարանում այսօրվա գոյության համար պարտական ենք հայ գեղջուկ կանանց եւ որա մի բարձրաստիճան տոյայի, Մշո տուլբան Սբ. Կարապետ վանքից Թ. Ռոստոմին վերագրվող Ավետարանը եւ շատ ուրիշներ: Արեւելյան Հայաստանի եւ Անդրկովկասի տարբեր քաղաքներ տեղափոխված այս ձեռագրերի զգալի մասը Մատենադարանում է պահվում, դրանք Սեն Արեւշատյանի վկայությամբ շուրջ երկու հազար են: Սակայն Արեւմտյան Հայաստանում՝ Անատոլիայում, այդ օրերին գտնվող գերմանացի, բելգիացի, ֆրանսիացի միսիոներների, զինվորականների եւ ականատեսների տեղեկություններով հենց միայն Մշո Առաքելոց վանքում պահվող ձեռագրերի համեմատությամբ այդ փրկվածները շատ փոքր են: Փրկվածների մեծ մասը Վասպուրականի «Կտուց», «Աղթամար» եւ այլ վանքերից են:

Երեւանի Մատենադարանից բացի, փրկված ձեռագրեր կան աշխարհի տարբեր գիտական ինստիտուտներում, վանքերում, գրադարաններում՝ Երուսաղեմում, Վիեննայում, Փարիզում: Հայտնի են դեպքեր, երբ թուրք բարբարոսներն, այնուամենայնիվ, կարողացել են հասկանալ այս ձեռագրերի նյութական արժեքը եւ դրանց մի մասը տարել են Եվրոպա ու վաճառել: Այդպիսի մի դեպք հիշատակեց Ս. Արեւշատյանը, երբ 1916 թ. մի թուրք սպա շուրջ 10 ձեռագիր է բերել գերմանացի հայտնի հայագետ Յոզեֆ Մարկվարտի մոտ եւ գնահատելուց հետո ուզեցել է տանել, սակայն հայագետը գնել եւ դրանք նվիրել է Վիեննայի Մխիթարյաններին: Տեղեկություններ կան Սամբուրում պահվող ձեռագրերի մասին, որոնք չեն ցուցադրվում եւ գաղտնի են պահվում՝ պատեհ առիթով գումարներ շահելու նպատակով:

«Մատենադարանն իր գոյությամբ, իր կատարած աշխատանքներով, հարատակություններով ընթերցող հանրությանը վերադարձնելով մեր նախնիների ժառանգությունը, դրանով աշխատում է իր պարտքը կատարել անմեղ զոհերի հիշատակին, աղագա սերունդներին փոխանցելով անցյալի մեր սուրբ մասունքները», ասաց Ս. Արեւշատյանը, ապա ներկայացրեց ֆրանսահայ պատմաբան դոկտ. Կլոդ (Ամեն) Մութաֆյանին: Նախորդ օրը նա Մատենադարանին էր նվիրել մի քանի տարի առաջ ողբերգական պայմաններում մահացած ֆրանսահայ Սարգիս Պողոսյանի՝ այժմ քոջ մոտ գտնվող ձեռագրերի եւ փոքրանկարների հարուստ հավաքածոյից մի պատառիկ: Մոտ IX-X դ. Հովհաննու ավետարանի 17-րդ գլուխը՝ երկաթագիր էջը, համալրելու է Մատենադարանի ձեռագրային հավաքածուները: Կլոդ Մութաֆյանը հույս ունի, որ չնայած գործադրված մեծ ջանքերին, իր հետ ամեն ճանապարհորդությանը Երեւան մի-մի մասունք կբերի եւ կնվիրի Մատենադարանին:

«Փրկված ձեռագրեր» ցուցահանդեսի աշխատանքները կատարել են Մատենադարանի ձեռագրատան վարիչ Գեւորգ Տեր-Վարդանյանը, փոխտնօրեն Արշակ Բանուչյանը, ցուցասրահի վարիչ Սիրա Չարախչյանը:

ՄԵԼՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆ

«Ադանան»՝ Դեմիրի եւ Գեւորգյանի կատարմամբ

Հայաստանի կառավարությունը հրավիրել է ամերիկացի արվեստագետ Դանիել Դեմիրին՝ մասնակցելու Եղեռնի 90-ամյակի հիշատակություններին եւ կատարելու իր «Ադանա» երգը Հայաստանի օպերայի ազգային նվագախմբի ընկերակցությամբ, հաղորդում է Սիրակուսայից (Նյու Յորք) «Շարի կոնսերտս» հասարակայնության հետ հաղորդակցության տեղեկատվական գրասենյակը: Հարցը պատմական եւ քաղաքական է, քանի որ ցարդ Մ. Նահանգները պաշտոնապես չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Հիշատակի պաշտոնական հանդիսությունը տեղի է ունենալու շաբաթ օրը՝ ապրիլի 23-ին, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի ներկայությամբ:

«Ադանան» Դեմիրի եւ Հայաստանում հայտնի երգահան Արա Գեւորգյանի համատեղ գործունեության արդյունքի է: Արան գրել է երաժշտությունը, Դեմիրը՝ բառերը: «Ես հորինեցի երգի բառերը՝ ոչ միայն միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելու այս սարսափելի ողբերգության վրա, այլ մանավանդ որպես միջոց ապահովելու հայ ժողովրդի վերքերը», ասել է նա՝ ավելացնելով, որ այդ իրադարձությունները 1.5 մլն քրիստոնյաների կյանք խլեցին, եւ ինքը որպես քրիստոնյա չի կարող լռել:

Դեմիրն ու Գեւորգյանն առաջին անգամ չէ, որ համագործակցում են: 2002-ին նրանք ստեղծել էին «Նոյի աղոթքը», որը պատմում է բիբլիական տապանի Արարատ լեռան գագաթին հանգրվանելու մասին:

Հ. Օ.

Առաջին «ամերիկյան անկյունը» Երեւանում

Երեկ Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսի մասնակցությամբ Իսահակյանի անվան գրադարանում տեղի ունեցավ առաջին «Ամերիկյան անկյան» բացումը: «Ամերիկյան անկյունները» ամերիկյան ոճի փոքր գրադարաններն են, որոնց նպատակն է աջակցել Հայաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ փոխըմբռնմանը՝ տարբեր ձեւաչափերով լիարժեք տեղեկատվություն տրամադրելով Միացյալ Նահանգների մասին:

Այժմ գրադարանն ունի գեղարվեստական, մանկապատանեական, կրթական բաժնեմասերով մոտ 200 կտոր գիրք, որոնց թիվը ապագայում կհասցվի 400-ի: Գրադարանին տրամադրվել են նաեւ 8 անուն ամսագիր, տեսաերիզներ, լազերային սկավառակներ, համակարգիչներ (մինչեւ տարեվերջ ինտերնետի անվճար մատակարարմամբ), որոնք բնակչությանը կտրամադրվեն անվճար: Նշենք նաեւ, որ այս նախաձեռնության շրջանակներում փետրվարի 2-ից գրադարանում ամեն շաբաթ կրկին անվճար ցուցադրվում են անգլիալեզու ուսուցողական ֆիլմեր:

ԱՄՆ դեսպանատունը նախատեսում է առաջիկայում «Ամերիկյան անկյուն» բացել նաեւ Գյումրու Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի մասնաճյուղում, հետո նաեւ՝ ամբողջ Հայաստանում:

Անկյան բացման ժամանակ ԱՄՆ դեսպան Ջոն Էվանսը նշեց, որ ամերիկացիների եւ հայերի միջեւ կա մեծ համակրանք՝ պայմանավորված երկու հանգամանքներով՝ գիրը եւ հանրային կրթությունը: «Ես դեռ վաղուց եմ ասել, որ Աստված հրեաներին տվել է օրենք, հայերին՝ այբուբեն, իսկ ամերիկացիներին՝ ինտերնետ», ավելացրեց դեսպանը:

Համերգ մարզահամերգային համալիրում

Սոֆի Դեւոյանի «Պարի եւ հոգու» թատրոնի 10-ամյա սան Լարիսա Հակոբյանը երեկ մարզահամերգային համալիրում հանդես եկավ բարեգործական համերգով, որի ամբողջ հասույթը պետք է տրամադրվի քաղցկեղով հիվանդ երեխաների բուժմանը: «Ազգի» հետ զրույցում թատրոնի տնօրեն Սոֆի Դեւոյանը նշեց, որ արդեն մեկ ամիս է իրենց մշակութային կենտրոնը բարեգործական ակցիաներ է կազմակերպում, որոնցից ստացված հասույթը տրամադրվում է կարիքավոր երեխաներին կամ նրանց մասին հոգ տանող կազմակերպություններին: Երեք օր առաջ կազմակերպած եւս մեկ բարեգործական համերգի հասույթը նվիրվել է «Օրան» կազմակերպությանը: «Նման ակցիաների նպատակը իմ սաներին սովորեցնելն է սիրել մարդկանց, բարի լինել կարիք ունեցողների հանդեպ», ավելացրեց թատրոնի ղեկավարը:

Իսկ երեկվա համերգին ներկայացան երգիչ-երգչուհիներ, նաեւ Սոֆի Դեւոյանի «Պարի եւ հոգու» թատրոնը:

ԳՈՌԾԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԱՇՏԵՑՍՏԵՐ

Վաղը պետք է պատասխան տանք

Ինչ ենք արել մշակութային ցեղասպանության դեմ

14 տարեկան Անդրանիկը լսել էր, որ Արեւմտյան Հայաստանում թուրքերը ոչնչացնում են հայկական եկեղեցիները, ջարդում խաչքարերը, սակայն չէր պատկերացնում, որ 631 թ. կառուցված Բագրեւանդի Սբ. Հովհաննու վանքի 1910 թ. լուսանկարի կողքին կտեսնի իննսուն տարի անց լուսանկարված վանքատեղին, ուր չկա վանքի ոչ մի հետք, որ Մշո Սբ Կարապետի լուսանկարի կողքին կտեսնի 1970-ականներին ավերակի վերածված վանքի մնացորդները: «Տե՛ս սրանք էլ Զոտղայի մասնատված խաչքարերն են», ասում էր ընկերներին ու սկսում նրանց հետ փնտրել հուշակոթողների դարասկզբի ու վերջի լուսանկարների տարբերությունները:

Երեկ լուսանկարիչ Սամվել Կարապետյանի աշխատանքների ցուցահանդեսի բացումն էր Երեւանի Կոմիտասի այգում: ՀՅԴ Հայոց ցեղասպանության 90-ամյակի հանձնախմբի անդամ Արտաշես Շահբազյանի գլխավորությամբ՝ նման միջոցառումներն ուղղված են հայոց պահանջատեր քաղաքականությանը: «Մենք ոչ թե պետք է լաց լինենք մեռելների վրա, այլ ապացուցենք, որ կատարվածը ցեղասպանություն է: Այսօրվա սերունդն իրավունք չունի մի կողմ քաշվել, վաղը պետք է պատասխան տանք՝ ինչ էինք անում մշակութային ցեղասպանության դեմ», համոզված է նա: Չպետք է մոռանանք ու մոռացության տանք, որ այսօր հայկական մշակութային ժառանգությունն ավերվում է 1915-23 թթ. նույն բարբարոսությամբ: Ավերածությունները շարունակվում են Նախիջեւանում եւ Արցախի բռնազավթված տարածքներում: Միջոցառման կազմակերպիչները համոզված են, որ մղձավանջը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չի կատեգորվում եղեռնագործ պետությունը:

«Այսօրվա բարդ եւ գլոբալիզացված աշխարհում բազմաթիվ հարցեր լուծվում են հասարակական կարծիքի միջոցով, իսկ Հայաստանում, համոզված եմ, շատերը տեղյակ չեն՝ հուշակոթողների վերացման ուղղությամբ ինչ է կատարվում հայկական բազմաթիվ տարածքներում, ասաց դաշնակցության երիտասարդական միության ներկայացուցիչ Զինավոր Մեղրյանը: Այսպես մենք խնդրի վրա ենք հրավիրում նաեւ պետական մարմինների եւ իշխանությունների ուշադրությունը»: Զինավոր Մեղրյանն ասում է, որ նման միջոցառումներից հետո Թուրքիայից տարաբնույթ արձագանքներ են սպասվում, սակայն նույնիսկ ամենաբացասական վերաբերմունքի համար էլ ուրախ են, դա նշանակում է՝ հասկանում են, որ հայ երիտասարդները պահանջատեր են եւ շարունակելու են տեր կանգնել իրենց իրավունքներին:

Անդրանիկը կանգնել էր նկարների մոտ ու ասում էր. «Կգնամ, այնտեղ կամուսնանամ, ընտանիք կկազմեմ: Որ մեր հողերը մեզ տան, սփյուռքահայերն էլ կգան Արեւմտյան Հայաստան, կապրեն իրենց քաղաքներում ու գյուղերում»:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Արհեստածին պայքարից չպետք է տուժի թատրոնը

Այն, որ մեր հանրապետությունում գործող որեւէ թատրոն մրցունակ չէ համաշխարհային թատերական շուկայում, քաջ գիտակցում է Կամերային երաժշտական թատրոնի տնօրենը: Հետեւաբար խոսելով հետագա անելիքների եւ ոլորտների մասին, որպես առաջնահերթություն նշում է թատրոնի ինտեգրումը թատերական միջազգային իրադարձություններին:

Գործարար եւ մասնագիտությամբ պրոդյուսեր Լեւոն Աբրահամյանը Կամերային երաժշտական թատրոնի տնօրեն նշանակվել է երեք ամիս առաջ եւ նշում է, որ արդեն որոշակի քայլեր ձեռնարկել է: «Ջերմ ենք բերել լուսային եւ ձայնային տեխնիկա, 4 ռադիոկայաններով հնչում է թատրոնի գովազդը, տպագրել ենք բուկլետներ, ազդագրեր: Թատրոնի համար ստեղծելու ենք վեբ կայք, որպեսզի կարողանանք կապ հաստատել արտերկրի հետ: Փորձում ենք աշխատել, սակայն մինչ օրս համապատասխան վերաբերմունք չեմ նկատել թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Մելիքսեթյանի կողմից: Ճիշտ հակառակը, նա ամեն կերպ խոչընդոտներ է ստեղծում, երկխոսության գնալու բոլոր փորձերը ձախողվել են», ասում է Լեւոն Աբրահամյանը:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Մելիքսեթյանը նշում է, որ ինքը չի ցանկանում աշխատել տնօրենի հետ այն պատճառաբանությամբ, թե նրա նպատակը թատրոնի սեփականաշնորհումն է: Ի պատասխան այդ խոսքերի մեր զրույցի ընթացքում թատրոնի տնօրեն Լեւոն Աբրահամյանն ասաց. «Նման ցանկություն ես ունեի: Մինչեւ թատրոնի տնօրեն նշանակվելը դիմել էի մշակույթի նախարարությանը որեւէ թատրոն սեփականաշնորհելու թույլտվություն ստանալու նպատակով: Նախարարությունը մերժեց: Այժմ ցանկություն չունեմ սեփականաշնորհելու այս թատրոնը: Ես բազմիցս այդ մասին ասել եմ պարոն Մելիքսեթյանին, սակայն նա շարունակում է առանց որեւէ հիմնավոր պատճառաբանության խոչընդոտներ ստեղծել»:

Կամերային երաժշտական թատրոնը ստեղծվել է 7 տարի առաջ, այդ տարիներին խաղացանկում ընդգրկվել է ընդամենը 3 ներկայացում: Վերջին 5 տարիներին այստեղ 7 տնօրեն է նշանակվել: «Թատրոնի տնօրենը ներսից պետք է լինի՝ թատրոնից հասկացող», ասում է Արմեն Մելիքսեթյանը: Նշենք, որ Արմեն Մելիքսեթյանի բնորոշմամբ, թատրոնից չհասկացող տնօրենն ավարտել է Մոսկվայի ԳԻՏԻՍ-ի պրոդյուսերական բաժինը, եղել է «Մեկ ազգ, մեկ մշակույթ», «Հայ ֆեստ» փառատոների գլխավոր պրոդյուսերը, այժմ էլ կազմակերպում է Հայաստանում Ռուսաստանի տարվա միջոցառումները: Որպես պատվավոր հյուր հրավիրված է մասնակցելու Ռուսաստանում անցկացվող «Ոսկե դիմակ» փառատոնին: «Արմեն Մելիքսեթյանի նպատակը մեկն է, նա ուզում է թատրոնի տնօրենի պաշտոնում տեսնել իր աղջկան», ասում է Լեւոն Աբրահամյանը: Արմեն Մելիքսեթյանը դա համարում է հերյուրանք:

Այստեղից հարց է ծագում, ո՞րն է 5 տարվա ընթացքում 7 տնօրենների փոփոխման պատճառը: Հակամարտության արդյունքում թատրոնի կոլեկտիվը բաժանվել է երկու մասի: Դերասանների մի մասը, որոնք Արմեն Մելիքսեթյանի կուրսից են, պաշտպանում են վերջինիս: Կոլեկտիվի ադմինիստրատիվ մասը եւ դերասանների մի մասը պաշտպանում են տնօրենին: Մարտի 9-ին միտումնավոր տարալվեց ներկայացումը, եւ սա, Արմեն Մելիքսեթյանի հավաստմամբ, փորձնական գործադուլ էր: «Շարունակելու ենք պայքարել», ասում է նա, իսկ Լեւոն Աբրահամյանը հավաստիացնում է, որ շարունակելու է աշխատել: «Իմ նպատակն է, որ թատրոնը դառնա հանրահայտ եւ մրցունակ: Ունեմ դրա հնարավորությունը, ցանկությունը»:

Հավելենք, որ փառատոնական նկրտումների հետեւանք այս արհեստածին «պայքարից» չտուժի այս թատրոնը, որն ըստ էության, չնայած իր 7-ամյա գործունեությանը չկայացած է: Դրա պարզ վկայությունը մշակույթի գործիչներին անվայել նման զզվոտոցներն են: Հուսանք, որ հնարավորություն կունենանք տեսնելու ոչ միայն ծանոթ եւ շարունակ կրկնվող ներկայացումներ, այլեւ նոր բեմադրություններ:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

Արսեն Թամրազյանը չորրորդն է

Սոֆիայում մեկնարկել է ծանրամարտի Եվրոպայի կանանց եւ տղամարդկանց հերթական առաջնությունը, որին մասնակցում են հին աշխարհամասի ուժեղագույն ծանրորդները: Մրցումների առաջին օրը տղամարդկանց մրցաշարում մեդալների համար պայքարեցին մինչեւ 56 կգ քաշային ծանրորդները: Մրցահարթակ դուրս եկավ նաեւ մեր հանրապետության առաջին պատվիրակը՝ գյումրեցի Արսեն Թամրազյանը: 22-ամյա ծանրորդը, որը Եվրոպայի եւ աշխարհի պատանեկան առաջնությունների բազմակի մրցանակակիր է, բավական վստահ մրցելույթներ ունեցավ: ՀՀ վաստակավոր մարզիչ Ասոն Մխիթարյանի սանը բոլոր վեց մոտեցումների ժամանակ էլ հաջողությամբ հաղթահարեց պատվիրված ծանրությունը եւ երկամարտի 250 (110+140) կգ արդյունքով զբաղեցրեց 4-րդ տեղը: Ինչ խոսք, երիտասարդ ծանրորդի համար Եվրոպայի առաջնությունում 4-րդը ճանաչվելը պետք է լավ ցուցանիշ համարել: Նշենք, որ երկամարտում Արսենը 10 կգ-ով զիջեց բրոնզե մրցանակակիր, բելառուսցի Վիտալի Դերբենյովին՝ 260 (117,5+142,5) կգ:

Իսկ Եվրոպայի չեմպիոնի տիտղոսին արժանացավ թուրք ծանրորդ Սեդաթ Արթուջը: Նա պոկում վարժությունում բարձրացրեց 125 կգ-անոց ծանրաձողը, հրեց 150 կգ եւ երկամարտում ցույց տվեց 275 կգ արդյունք: Նշենք, որ Աթենքի օլիմպիադայում Արթուջը երկամարտի 280 (125+155) կգ արդյունքով միայն 3-րդն էր, իսկ չեմպիոնի կոչումը 295 (135+160) կգ արդյունքով նվաճել էր նրա անվանի հայրենակից Հալիլ Մութլուն: Սոֆիայում արծաթե մեդալն էլ բաժին հասավ թուրք ծանրորդ Էրոլին՝ 265 (120+145) կգ:

Կանայք իրենց հարաբերությունները պարզեցին քաշային երկու կարգում: Մինչեւ 48 կգ քաշային մարզուհիների մրցավեճում ուժեղագույնը ճանաչվեց ռուսաստանցի Սվետլանա Ուլյանովան՝ 177,5 (77,5+100) կգ: Վերջինս հաղթող էր ճանաչվել նաեւ 2003 թ. Եվրոպայի առաջնությունում, իսկ անցյալ տարի բավարարվել էր արծաթե մեդալով: 2-րդ տեղը գրավեց իսպանուհի Ռեբեկա Սայրեսը՝ 175 (80+95) կգ: Բրոնզե մեդալակիր դարձավ բուլղարուհի Դոնկա Մինչեւան՝ 165 (72,5+92,5) կգ:

Մինչեւ 53 կգ քաշային մարզուհիների մրցավեճում Եվրոպայի չեմպիոնուհի հռչակվեց բելառուսցի Նաստասիա Նովիկովան՝ 195 (85+110) կգ: Արծաթե մեդալը նվաճեց ռումինուհի Մարիորա Մունցյանը՝ 192,5 (87,5+105) կգ: Բրոնզը բաժին հասավ ուկրաինուհի Տրոցենկոյին՝ 187,5 (82,5+105) կգ:



«Յուվենտուսը» մտադիր է բաժանվել Տրեզեգեից

«Յուվենտուսի» հարձակվող Դավիթ Տրեզեգեի գլխին մութ ամպեր են կուտակվում: Իտալական լրատվամիջոցների հաղորդագրության համաձայն, ակումբի ղեկավարությունը մտահոգված է ֆուտբոլիստի ֆիզիկական վիճակով, որն ընթացիկ մրցաշրջանում հաճախակի է վնասվածքներ ստանում: Երեք ամիս [illegible] խաղադաշտ դուրս չեկավ ուսի վնասվածքի պատճառով, հետո 20 օր հիվանդացել էր, իսկ այժմ էլ նրան տանջում են ոտքի ցավերը: Տրեզեգեն մինչեւ վերջին պահը հույս ուներ մասնակցելու «Լիվերպուլի» հետ չեմպիոնների լիգայի հանդիպմանը, սակայն ցավերն այնքան ուժեղ էին, որ ստիպված էր հրաժարվել խաղալու մտից:

Դեռեւս անցյալ տարվա ամռանը Տրեզեգեն կարող էր հեռանալ «Յուվենտուսից»՝ ընդունելով «Բարսելոնի» հրավերը, սակայն թիմի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելոյի պահանջով պայմանագրի ժամկետը երկարացվեց մինչեւ 2006 թ.: Ներկայումս իրավիճակն այլ է: Իրեն գերազանց է դրսեւորում ըվեդ հարձակվող Զլատան Իբրահիմովիչը, ուստի ակումբի ղեկավարությունը մտադիր է Տրեզեգեին վաճառել «Բարսելոնին» կամ էլ Անգլիայի պրեմիեր-լիգայի ակումբներից մեկին: Սակայն Տրեզեգեն ցանկանում է մնալ «Յուվենտուսում» եւ հույս ունի հաջորդ մրցաշրջանում կրկին աչքի ընկնել արդյունավետ խաղով: Անցյալ մրցաշրջանի 30 խաղում նա 20 գոլ էր խփել, իսկ այս տարի 18 հանդիպումում դարձել է 9 գոլի հեղինակ: «Յուվենտուսի» ղեկավարությունը մտադիր է Տրեզեգեի տրանսֆերային գումարով ձեռք բերել ֆրանսիական «Մոնակոյի» 28-ամյա հարձակվող Շաբանի Նոնդային:

Ռուսաստանում կրկին խոճկորների մրցավազք է անցկացվում

Խոճկորների մրցավազքն աշխարհի շատ երկրներում մեծ մասսայականություն է վայելում: Նման մրցումներ կանցկացվեն նաեւ Ռուսաստանում, որտեղ նույնիսկ ֆեդերացիա է հիմնվել: Ռուսաստանում վերջին անգամ խոճկորների մրցավազք է անցկացվել ավելի քան 100 տարի առաջ՝ 1898 թ. Նիկոլայ 2-րդի օրոք: Մրցումները կազմակերպվում էին «Ցվետոչնի» շուկայում, որտեղ զանազան կենդանիներ էին վաճառում: Խոճկորների մրցավազքը մեծ բազմություն էր հավաքում եւ ցանկացողները կարող էին խաղադրույքներ կատարել: «Մոսկովսկիե վեդոմոստիի» տեղեկատվության համաձայն, Նիկոլայ 2-րդի չորսամյա դուստրը՝ Օլգան, «Ցվետոչնի» շուկայի մոտով անցնելիս հրամայել էր կանգնեցնել կառքը եւ խաղադրույք էր կատարել իրեն դուր եկած խոճկորի հաղթանակի համար: Սակայն հաղթել էր ոչ իր ընտրած խոճկորը, եւ Օլգան 200 ռուբլին տանուլ էր տվել:

Ռուսաստանում խոճկորների մրցումների վերսկսումը տեղի է ունեցել անցյալ տարի «Զոո Ռոսիա» միջազգային ցուցահանդեսի շրջանակներում: Մրցումները բավական մեծ հետաքրքրություն էին առաջացրել. ավելի քան 50 հազար հանդիսական էր հետեւում մրցավազքին: Այս տարի մրցումները կանցկացվեն հունիսի 3-5-ը: 15 խոճկորներ արդեն սկսել են մարզումները փորձառու մարզիչների եւ բժիշկների ղեկավարությամբ: Մարզումներն անցկացվում են մարզական խոզաբուծության ֆեդերացիայի վարձած մարզաբազայում:

Ռոմարիոն հրաժեշտ կտա հավաքականին

Մայիսի 27-ին Գվատեմալայի հավաքականի հետ ընկերական հանդիպումը բրազիլացի հանրահայտ ֆուտբոլիստ Ռոմարիոյի հրաժեշտի խաղը կլինի: 1994 թ. աշխարհի չեմպիոնն ու լավագույն ֆուտբոլիստը վերջին անգամ խաղադաշտ դուրս կգա Բրազիլիայի ազգային հավաքականի մարզաշապիկով: 39-ամյա վետերանը կընդգրկվի մեկնարկային կազմում, այնուհետեւ կփոխարինվի: Չնայած պատկառելի տարիքին, Ռոմարիոն շարունակում է ելույթները «Վասկո դա Գամայում»: Նա նաեւ ընդգրկվել է երկրի լողափային ֆուտբոլի հավաքականում եւ հանդես կգա մայիսին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք լողափային ֆուտբոլի աշխարհի առաջնությունում:

10 ֆունտ ստեռլինգ ռեկորդի համար

«Քրիսալ Պելասի» հետ առաջնության նախորդ տուրում կայացած խաղում «Էվերտոնի» կազմում խաղադաշտ դուրս եկած պատանի հարձակվող Ջեյմս Վոգանը յուրօրինակ ռեկորդների հեղինակ դարձավ: Նա դարձավ «Էվերտոնի» կազմում մինչեւ այժմ հանդես եկած ֆուտբոլիստներից ամենաերիտասարդը: Վոգանը «Էվերտոնում» իր նորամուտը նշեց 16 տարեկան 271 օրականում: Նախկին ռեկորդակիր Զո Ռոյը նրանից մեծ էր 11 օրով: Վոգանն իր նորամուտը նշեց «Քրիսալ Պելասի» դարպասը խփած գոլով: Այսպիսով, նա դարձավ ոչ միայն «Էվերտոնում», այլեւ պրեմիեր լիգայում գոլ խփած ամենաերիտասարդ ֆուտբոլիստը: Մինչ այդ «Էվերտոնում» գոլ խփած ամենաերիտասարդ ֆուտբոլիստը Ուեյն Ռունին էր, որը 89 օրով մեծ էր Վոգանից: Իսկ պրեմիեր լիգայի նախկին ռեկորդակիրը «Լիդսի» հարձակվող Ջեյմս Միլներն էր, որը 86 օրով էր մեծ Վոգանից:

«Էվերտոնի» ղեկավարությունը, որը վերջին շրջանում սկսել է վստահել երիտասարդ ֆուտբոլիստներին, որոշեց յուրօրինակ ձեւով վարձահատույց լինել ռեկորդների համար: Այսուհետեւ նա շաբաթական 10 ֆունտ ստեռլինգ ավելի կստանա, որի շնորհիվ շաբաթական աշխատավարձը կկազմի 90 ֆունտ ստեռլինգ: Իհարկե, պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների աշխատավարձերի համեմատ Վոգանի ստացած գումարը ծիծաղելի է թվում, սակայն միայն մեկ գոլով նրա աշխատավարձը բարձրացավ 12 տոկոսով: Իսկ ավելի մեծ գումարներ պատանի ֆուտբոլիստին «Էվերտոնը» կվճարի ամռանը, երբ Ջեյմսը կավարտի դպրոցը:

Հակոբյանը սկսեց ոչ-ոքի արդյունքով

Սոչիի «Դագոմիս» առողջարանում մեկնարկել է շախմատի Ռուսաստանի թիմային առաջնությունը, որն անցկացվում է երեք մրցաձեւից՝ դասական շախմատից, արագ շախմատից եւ կայծակնային մրցաշարից: Պրեմիեր լիգայում գլխավոր մրցանակի համար պայքարում են տղամարդկանց 12 թիմեր: Հաղթողը կորոշվի բոլոր պարտիաներում վաստակած միավորների ընդհանուր քանակով: Մրցաշարը բավական ուժեղ կազմ է հավաքել: Բավական է նշել, որ մասնակիցների թվում են 2700 եւ բարձր վարկանիշ ունեցող 9 գրոսմայստերներ՝ Վասիլի Իվանչուկը (2739), Պյոտր Սվիդլերը (2725), Ալեքսանդր Գրիշչուկը (2724), Ալեքսանդր Մորոզեւիչը (2717), Բորիս Գելֆանդը (2713), Եվգենի Բարեեւը (2709), Ալեքսեյ Դրեեւը (2705), Վլադիմիր Հակոբյանն (2703) ու Վիորել Բոլոգանը (2700):

Նշենք, որ առաջին չորս տեղերը զբաղեցրած թիմերն իրավունք կստանան Ռուսաստանը ներկայացնելու Եվրոպայի չեմպիոնների գավաթի խաղարկությունում: Մասնագետների կարծիքով, առաջին մրցանակի համար պայքար կմղեն առնվազն վեց թիմեր: Գործող չեմպիոն «Տոմսկ-400»-ի հետ մրցավեճի կբռնվեն «Մոսկվա Վենը», «Լադյան», նախկին «Նորնիկելը», որը հանդես է գալիս շախմատի ֆեդերացիայի անվան տակ:

Եկատերինբուրգի «Մոսկվա Վենի» կազմում հայտավորված են Վլադիմիր Հակոբյանը եւ Ռաֆայել Վահանյանը: Հակոբյանը հանդես է գալու 3-րդ խաղատախտակի վրա, Վահանյանը նշված է 6-րդը: Իսկ «Տոմսկ-400»-ի կազմում հայտավորված է Լեւոն Արոնյանը: Նշենք, որ թիմերի կազմում ընդգրկված են 8 շախմատիստներ, որոնցից յուրաքանչյուր տուրում մրցավեճի են բռնվելու 6-ը:

Առաջին տուրում «Մոսկվա Վենը» 2,5-3,5 հաշվով զիջել է «Լադյային»: Հակոբյանը 3-րդ խաղատախտակի վրա ոչ-ոքի է ավարտել պարտիան Վալերի Յանդեմիրովի հետ: «Մոսկվա Վենի» մյուս չորս շախմատիստներն էլ՝ Գրիշչուկը, Սակաեւը, Մոտիլյովն ու Ալեքսանդրովը պարտիաներն ավարտել են ոչ-ոքի, իսկ Դրեեւը զիջել է Ռուբլյովսկուն: Վահանյանը փաստորեն մրցախաղին չի մասնակցել:

Մեկնարկային տուրում ամենախոշոր հաշվով հաղթանակը տոնեցին «Թերմոստոյի» շախմատիստները՝ պարտության մատնելով ՕՇԿ-ին (5-1): Հենց նրանք էլ 5 միավորով գլխավորեցին աղյուսակը:

Լոնդոնն անվճար հեռախոսակապ է խոստանում օլիմպիականներին

Եթե Լոնդոնը դառնա օլիմպիադա-2012-ի մայրաքաղաք, ապա բոլոր օլիմպիականներին (մոտ 10 հազար մարզիկ) եւ մարզական չինովնիկներին մի շարք արտոնություններ կտրամադրվեն: Այս մասին հայտարարել է Լոնդոնի օլիմպիական խաղերի կազմկոմիտեն: Ներկայացված ծրագրի համաձայն, օլիմպիական խաղերի ավարտից հետո մարզական բոլոր պատվիրակությունների հայրենիք վերադարձի ծախսերը կհոգան օլիմպիադայի կազմակերպիչները: Բացի այդ, օլիմպիական ավանում բնակվող մարզիկները հնարավորություն կունենան անվճար հեռախոսային խոսակցություններ ունենալ աշխարհի ցանկացած վայրում գտնվող անձնավորությունների հետ: Խաղերի մասնակիցներն անվճար կերթեւեկեն Լոնդոնով, իսկ նրանց ընտանիքների անդամներին ու մերձավորներին անվճար կաղահովեն կացարանով:

200 ազգային օլիմպիական կոմիտեներից յուրաքանչյուրին Մեծ Բրիտանիայի տարածքում մարզումներ կազմակերպելու համար խաղերի կազմակերպիչները 50 հազարական դոլար կտրամադրեն: Նշված արտոնությունների շնորհիվ Լոնդոնը հույս ունի հաղթող ճանաչվել օլիմպիադա-2012-ի մայրաքաղաքի համար մղվող պայքարում: Հիշեցնենք, որ թեկնածուների թվում են նաեւ Մոսկվան, Մադրիդը, Փարիզը եւ Նյու Յորքը:

«Լիվերպուլը» ստիպեց լրագրողին ուտել տորթը

Անսովոր փորձության ենթարկվեց անգլիացի հայտնի լրագրող Մարկ Լորենսոնը: «Լիվերպուլի» նախկին պաշտպանը, որ ներկայումս BBC հեռուստաընկերությունում փորձագետ է, խոստացել էր ցանկացած չափի տորթ ուտել, եթե չեմպիոնների լիգայի մրցաշարում անգլիական ակումբին հաջողվեր հաղթահարել «Յուվենտուսի» դիմադրությունը: Լորենսոնը դա անհնար էր համարել: Սակայն ինչպես հայտնի է, «Լիվերպուլը» հաղթող ճանաչվեց «Յուվենտուսի» հետ մրցավեճում եւ մտավ կիսաեզրափակիչ: Իսկ դրանից մի քանի օր անց Լորենսոնը «Լիվերպուլի» գործադիր տնօրեն Ռիկ Պարիից մի մեծ ծանրոց ստացավ, որում չեմպիոնների լիգայի եւ անգլիական ակումբի խորհրդանշաններով զարդարված տորթ էր: Այս առնչությամբ լրագրողը հետեւյալն է նշել. «Տորթը

շատ համեղ ու գեղեցիկ էր: Իհարկե, նման նվեր իմ սիրելի թիմից չէի սպասում: Մրցավեճի ելքը գուշակելիս վստահ էի, որ առանց Սթիվեն Ջերարդի «Լիվերպուլը» չի կարող հաղթել «Յուվենտուսին»: Չէի սպասում, որ լիվերպուլցիներն այդքան լավ կխաղան եւ ինչպիսի դրական ազդեցություն կունենա Ջաբի Ալոնսոյի վերադարձը»:

Ոսկե մեդալն աճուրդի է հանվել

1966 թ. ֆուտբոլի աշխարհի չեմպիոն Անգլիայի հավաքականի նախկին ֆուտբոլիստ Ալան Բոլն աճուրդի է հանել ոսկե մեդալը: Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտում ԳՖՀ-ի հավաքականի հետ պատմական եզրափակիչ հանդիպման մասնակիցը, որն այն ժամանակ Անգլիայի հավաքականում ամենաերիտասարդն էր (21 տարեկան), ներկայումս հայտնվել է ծանր կացության մեջ: Անցյալ տարի մահացել է 60-ամյա Ալան Բոլի կինը եւ նա ստիպված է [illegible] տանել իր 3 երեխաների եւ 3 թոռների մասին: Անգլիայի հավաքականի կազմում 72 խաղ անցկացրած Բոլը հույս ունի ոսկե մեդալի վաճառից 120 հազար ֆունտ ստեռլինգ (230 հազար դոլար) [illegible]: Բացի այդ, հնարավոր է [illegible] հազար ֆունտ ստեռլինգ ստանալ աշխարհի առաջնությունում հաղթելու համար ստացած գլխարկի [illegible] հազար ֆունտ էլ՝ երկու այլ մեդալների վաճառից:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Սպառնում է թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետը

Ապրիլի 20-ին, երբ Երեւանում հազիվ էին սկսվել Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջազգային գիտաժողովի աշխատանքները, թուրքական «Միլիեթ» թերթը հասցրեց արձագանքել դրանց, գլխավորապես կենտրոնանալով ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի բացման խոսքի վրա:

Նույն օրն այս թերթն արձագանքել է նաեւ թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Հիլմի Օզյոռի ռազմական ակադեմիայում ունեցած ընդարձակ ելույթին, որի ընթացքում նա գնահատելով Թուրքիայի շուրջը ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը, չի մոռացել հիշատակել նաեւ Հայաստանի մասին:

Օզյոռը մտահոգիչ համարելով Հայաստանի դիրքորոշումը, ասել է. «Թուրքիան ցանկություն ունի Հայաստանի հետ նորմալացնել հարաբերությունները: Սակայն դրա համար անհրաժեշտ է, որ Հայաստանը հարգի միջազգային իրավունքի հիմնական նորմերը, կատարի բարիդրացիության պահանջները: Մինչդեռ Հայաստանը ոչ միայն չի ճանաչում Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, այլեւ Հայոց ցեղասպանության անհիմն մտադումների ճանաչման նպատակով գործունեություն է ծավալում միջազգային ասպարեզում, անտեսում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումներն ու օկուպացման տակ է պահում Ադրբեջանի տարածքի զգալի մասը: Ցեղասպանության անհիմն մտադումների քաղաքական եւ իրավական հիմքերը վերացել են Լոզանի պայմանագրով: Պայմանագիրը Թուրքիայի Հանրապետության վրա որեւէ պարտավորություն չի դրել»:

Թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետի ելույթի զուգադիպությունը Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջազգային համաժողովի բացմանը պատահականություն էր, թե ոչ, դժվար էր ասել: Բայց որ բանակի գեներալ Օզյոռի ոճը բավականին սպառնալից է, կասկած չի հարուցում:

Հ. ՅԱՔՈԲՅԱՆ

Նախախնությունն արգելեց Զարեհոլուին մասնակցել երեւանյան գիտաժողովին

Երեկ Երեւանում սկսված «Ճանապարհն հանցանք, ծայրագույն մարտահրավեր. ցեղասպանությունն ու մարդու իրավունքները» թեմայով Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջազգային համաժողովին հրավիրվել էին աշխարհի տարբեր երկրներից եւ սփյուռքից հայտնի գիտական, քաղաքական, հասարակական գործիչներ, այդ թվում նաեւ՝ Թուրքիայից:

Թուրք գիտնականներից Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի պրոֆ. Բասքըն Օրանն ու Սամբուլի Բիլգի համալսարանի գրականության պրոֆեսոր Մուրատ Բելգեն մասնակցում էին համաժողովի աշխատանքներին, իսկ հայ հասարակությանը քաջ հայտնի, հրատարակիչ եւ հասարակական գործիչ Ռագըփ Զարեհոլուն բացակայում էր:

Պարզվում է, նրա բացակայության պատճառը Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայ հեղինակի հերթական աշխատության թարգմանաբար հրատարակումն է Սամբուլում: Դատախազությունը հրատարակման համար նախնական հարցաքննության է ենթարկել Զարեհոլուին՝ այսպիսով նրան զրկելով Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված երեւանյան միջազգային համաժողովին մասնակցելու հնարավորությունից:

Հ. Ղ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) կազմակերպում է ՊԳԳ - ՄԲԱՇՁԲ - 05/70 ծածկագրով մրցակցային բանակցություններ՝ **«Վերիշեն-Ծաղ ա/ճ կմ 0+000-կմ 17+956 (Պկ0+00-Պկ160+00) հատվածի շինարարական աշխատանքների»** ձեռքբերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 11500,0 ՀՀ դրամ փոխանցել «Հայ-Ինվեստ» բանկ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 115003450281 հաշվեհամարին և սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25 Հանձնաժողովի քարտուղար Ս. Մելիքյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաև անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչև դրանց բացման պահը՝ հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 16:30:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ԳՀԱՇՁԲ - 05/14 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար **«Ցեմենտի հումքի հանքավայրերի նկատմամբ պաշարների դասակարգման կիրառման հրահանգի մշակում»** աշխատանքների ձեռքբերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 800.0 ՀՀ դրամ փոխանցել «Միջինվեստբանկ» Հ/Հ 175004670790 «Գոհակ» ՍՊԸ-ին և սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետևյալ հասցեով՝ ք.Երևան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25 Գ.Մարկոսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաև անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչև դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 16:00:

ՀՀ Կենտրոնական բանկը 21.04.2005թ. ժ.9.00 ից սահմանում է արտարժույթի հետևյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետևյալ գները.

ISO ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	445.25	440.80	449.70
EUR	1	ԵՎՐՈ	581.01	577.50	584.50
RUR	1	Ռուս. ռուբլի	16.06	15.10	17.00

«Պրես-Աստաշտ» ընկերությունն անցկացնում է 2005 թ. երկրորդ կիսամյակի ՀՀ, ՌԴ եւ ԱՊՀ այլ երկրներում հրատարակվող թերթերի, ամսագրերի եւ այլ պարբերականների, ինչպես նաեւ բուհական մասնագիտական-ուսումնական գրականության բաժանորդագրություն: Հրավիրում ենք համագործակցության: Բաժանորդագրությունը կարող եք ձեւակերպել ընկերության գրասենյակում Մարշալ Բաղրամյան 45/10 հասցեով:

Հեռ.՝ 270-222 Հեռ./Ֆաքս՝ 278-255



Նորարար փորձառական արվեստի կենտրոնը

Ապրիլի 22-ից մայիսի 13-ը կազմակերպում է ցուցահանդես՝
«... ԵՎ ԵՂԵՎ ԼՈՒՅՍ ԽԱՎԱՐԻ ՄԵՋ»

Կներկայացվեն արվեստագետներ Ջորջ Լլորելլայի, Նաչո Մարտիի, Ասիեր Գոգորցայի ստեղծագործությունները

Բացումը ժ. 17:00-ին,
դիտման ժամերը՝ երկուշաբթի-ուրբաթ, ժ.11:00-17:00
շաբաթ, ժ.11:00-15:00

THE EURASIA FOUNDATION

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Եվրասիա հիմնադրամի
հայաստանյան ներկայացուցչությունը
հայտարարում է դրամաշնորհների բաց մրցույթ
«Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացումը Հայաստանում»
թեմայով

Նպատակը

Մրցույթի նպատակն է բարելավել իրավական դաշտը փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար՝ տնտեսական վեճերի լուծման այլընտրանքային եղանակները խթանելու միջոցով

Ովքեր կարող են մասնակցել մրցույթին

Գործարար ընկերակցությունները, իրավաբանների մասնագիտացված ընկերակցությունները, առևտրաարդյունաբերական պալատները և հասարակական կազմակերպությունները կարող են մասնակցել մրցույթին, եթե նրանք գրանցված են ՀՀ գործող օրենսդրության համաձայն և ունեն համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ ծրագիրն իրականացնելու համար:

Ինչպես դիմել

Հայտերը հարկավոր է ներկայացնել Եվրասիա հիմնադրամի երևանյան գրասենյակ մինչև **2005 թ. մայիսի 22-ը, ժ.17:00:** Մրցույթի պայմաններին ծանոթանալու, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ստանալու համար կարող եք դիմել Եվրասիա հիմնադրամի երևանյան գրասենյակ կամ այցելել www.eurasia.am <http://www.eurasia.am> վեբ կայքը:

2005թ. ապրիլի 29-ին, ժ.15:00 Եվրասիա հիմնադրամի երևանյան գրասենյակում հետաքրքրված կազմակերպությունների համար տեղի կունենա տեղեկատվական սեմինար:

Հիմնադրամի կողմից չի նախատեսվում անհատական խորհրդատվության տրամադրում:

Մրցույթը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) կողմից:

Եվրասիա հիմնադրամ, հայաստանյան ներկայացուցչություն
Հասցե՝ ՀՀ, Երևան 375019, Դեմիրճյան փ. 4
Հեռ./Ֆաքս՝ (374 1) 56.54.78, 58.60.59, 58.61.59
Էլ. հասցե: eurasia@eurasia.am
Վեբ կայք: www.eurasia.am

CQGէլ

Open positions at CQG!

CQG is a 25-year old US-headquartered company that creates sophisticated data exchange and analytical systems used by major fibabcial institutions and trading professionais. Our Yerevan office offers a western environment utilizing American software development practices- our processes correspond to CMM Level 5.

Positions available:

Software Development Director with following requirenets:
- Bachelor's degree in Computer Science or related discipline
- 5+ years of experience in software development organization
- Participation in software development projects that used strong software development methodologies
- Proven ability to manage and lead people

Software Developers with following requirements:
- Bachelor's degree in Computer Science or related discipline
- 2+ years of C++/c#
- Extensive knowledge of Windows platform technologies including Win32, API, COM, threading and sockets

Please submit your resumes to: yer job@cgg.com or in hand to: CQGI MA, 12 Vagarshyan Str., 6 floor, Yerevan, Armenia.

For more information call (1) 26-56-04 or visit our site www.cqg.com

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA
LOG ON TO
www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրած է տպագրության՝ 20. 04. 2005 Գինը՝ 100 դրամ